

վճարը ընթացի

Դրսւսդ

«Կանայք, խաղաղություն, անվտանգություն»
օրակարգի շրջանակներում
ՄԱԿ Անվտանգության խորհրդի
1325 և 1820 բանաձևերի տեղայնացում



«Կանայք, խաղաղություն, անվտանգություն»
օրակարգի շրջանակներում
ՄԱԿ Անվտանգության խորհրդի
1325 և 1820 բանաձևերի տեղայնացում

Training Module

**ՄԱԿ Անվտանգության խորհրդի 1325 և 1820
բանաձևերի տեղայնացում
դասընթացի մոդուլ**

Սույն դասընթացի մոդուլը պատրաստվել է Կին խաղաղա-
րարների համաշխարհային ցանցի հետ համագործակցությամբ
և Ավստրիայի զարգացման գործակալության ֆինանսավորմամբ
իրականացված «Տեղական, ազգային և տարածաշրջանային
ռազմավարություն՝ բարելավելու ՄԱԿ-ի ԱԽ 1325 բանաձևի
իրականացումը Հայաստանում, Ադրբեջանում, Վրաստանում,
Մոլդովայում և Ուկրաինայում» ծրագրի շրջանակներում:

Մոդուլի կազմող՝ Զարինե Հարությունյան, Քնարիկ Մկրտչյան

© «Հասարակություն առանց բռնության» ՀԿ, 2018

Վաղարշյան 26, բն.2, 0012 Երևան
+374 91 42 81 92, +374 60 44 81 92

team@swv.am

www.swv.am

Բովանդակություն

Ներածություն	5
Տերմինների բառարան	6
Հապավումների ցանկ	8
Դասընթացի կառուցվածքը	9
Վարժություն 1. Ծանոթացում	15
Վարժություն 2. Կանոնների մշակում, ակնկալիքների հստակեցում	17
Վարժություն 3. «Գենդեր» եզրույթի սահմանում.....	18
Վարժություն 4. Հակամարտության վերլուծություն(«Բառերի սրճարան», Word cafe)	19
Վարժություն 5. Լավ կառավարման դրական շրջան	22
Վարժություն 6. ԿԽԱ բանաձևերի տեղայնացում	23
Վարժություն 7. Կանանց անվտանգությանը սպառնացող խնդիրները	24
Վարժություն 8. Տեղայնացման պլանի մշակում	26
Վարժություն 9. Օրվա ամփոփում	28
Սեմինար 1. ՄԱԿ ԱԽ 1325 և 1820 բանաձևեր. ընդհանուր դրույթների ներկայացում.....	29
Սեմինարի բնութագիր.....	29
Վարժանք	34
Սեմինար 2. ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի իրականացմանը նպաստող մեխանիզմներ և գործընթացներ	35
Սեմինարի բնութագիր.....	36
Սեմինար 3. ՀՀ-ում կանանց իրավունքների պաշտպանության իրավական և քաղաքական մեխանիզմները	40
Սեմինարի բնութագիր.....	40
Հավելված 1. Ակտիվացման վարժություններ	
Վարժություն 1. «Կծիկ»	46
Վարժություն 2. «Պիցցա»	46
Հավելված 2. Նախադասընթացային գնահատման հարցաթերթիկ.....	47
Գրականության ցանկ	54
Էլեկտրոնային հասցեներ	55

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Հասարակություն առանց բռնության» ՀԿ-ն, հետամուտ լինելով բարձրացնել տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև շահագրգիռ այլ կողմերի շրջանակներում ՄԱԿ ԱԽ 1325, 1820, ինչպես նաև ԿԽԱ օրակարգի մասին ունեցած տեղեկության մակարդակը, կարևոր է համարում նշված թիրախային խմբերի շրջանակներում իրազեկվածության բարձրացման և հմտությունների կառուցմանն ուղղված դասընթացների անցկացումը:

Մոդուլը պարունակում է ինչպես տեսական, այնպես էլ գործնական համապարփակ տեղեկություն: Մոդուլը նախատեսված է այն դասընթացավարների համար, ովքեր աշխատելու են շահագրգիռ փարբեր խմբերի հետ՝ ԿԽԱ օրակարգի շուրջ իրազեկվածության մակարդակի բարձրացման նպատակով:

«Տեղական, ազգային և տարածաշրջանային ռազմավարություն՝ բարելավելու ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի իրականացումը Հայաստանում, Ադրբեջանում, Վրաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում» ծրագրի շրջանակներում սույն մոդուլի թեմաների հիման վրա ՀԱԲ-ը արդեն իսկ անց է կացրել դասընթացների շարք Տավուշի և Սյունիքի մարզերում: Հենց այդ փորձի հիման վրա էլ լրամշակվել է և ներկայացվում է կիրառության:

Մոդուլում ներկայացված են դասընթացավարին անհրաժեշտ տեսական և գործնական գիտելիքներ, վարժությունների օրինակներ, դասընթացի արդյունավետ կազմակերպման և անցկացման համար նախատեսված գործիքներ, ինչպես նաև դասընթացի գնահատման մեխանիզմներ:

ՏԵՐՄԻՆՆԵՐԻ քառարան

Գենդեր

Գենդերը ձեռքբերովի, սոցիալապես ամրագրված (հասարակության կողմից վերագրված) վարք է, կանանց և տղամարդկանց միջև հարաբերությունների սոցիալական հայեցակետ, որն արտահայտվում է հասարակական կյանքի բոլոր ոլորտներում, ներառյալ՝ քաղաքականությունը, տնտեսությունը, իրավունքը, գաղափարախոսությունը, մշակույթը, կրթությունը, գիտությունն ու առողջապահությունը:¹

Գենդերազգայնություն

Գենդերային տարբերությունները, հիմնախնդիրներն (խտրականություն, բռնություն) ու անհավասարությունը գիտակցելու և ընդգծելու կարողություն է, որը ենթադրում է նաև ռազմավարություն և գործողություններ:²

Գենդերային կարծրատիպ

Կանանց և տղամարդկանց միջև տարբերությունների մասին տվյալ ժամանակահատվածում տվյալ հասարակության մեջ առկա կարծրացած պատկերացումներ:³

Գենդերային հավասարություն

Կանանց և տղամարդկանց հավասար իրավական կարգավիճակ է և դրա իրականացման համար հավասար հնարավորություններ, որոնք հնարավորություն են ընձեռում անձանց, անկախ սեռից, ազատորեն օգտագործելու իրենց ունակությունները քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային և հասարակական կյանքի այլ ոլորտներում մասնակցություն ունենալու համար:⁴

Չինված հակամարտություն

Համաձայն միջազգային մարդասիրական իրավունքի, միջազգային զինված հակամարտությունը սահմանվում է որպես հակադրություն երկու և ավելի պետությունների միջև, իսկ ոչ-միջազգային զինված հակամարտությունը՝ կառավարական զինված ուժերի և ոչ կառավարական

1. ՀՀ օրենքը Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մասին, 2013 <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=83841>

2. European Commission, Justice Glossary, 2013 https://definedterm.com/gender_sensitivity

3. ՀՀ օրենքը Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մասին, 2013 <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=83841>

4. ՀՀ օրենքը Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մասին, 2013 <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=83841>

Խաղաղաշինություն

զինված ուժերի միջև:⁵

Միջոցառումների շրջանակ է՝ ուղղված հակամարտության ծագման և/կամ վերսկսման ռիսկի նվազեցմանը՝ ազգային բոլոր մակարդակներում զարգացնելով հակամարտության կարգավորմանն ուղղված հմտությունները և հիմք ստեղծելով կայուն խաղաղության և զարգացման համար: Ավելին, խաղաղաշինական ազգային ռազմավարությունները պետք է համապատասխանեցված լինեն տվյալ պետության կարիքներին և ներառեն վերոնշյալ նպատակներին հասնելու հստակ և փոխկապակցված քայլեր:⁶

Ռազմականացում

Ուժի և իշխանության (բռնի) դրսևորում է, քաղաքացիների շրջանում ռազմական արժեքների, խորհրդանիշերի և լեզվի տարածում, հիերարխիայի և ազգայնականության ամրապնդում, թշնամու՝ որպես «ուրիշ»-ի սահմանում, բռնության արդարացում՝ իբրև կոնֆլիկտի հաղթահարման միջոց, ինչպես նաև «տղամարդկային» և «կանացի» դերերի խիստ տարաբաժանում:⁷

5. Կոնվենցիա պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին, 1949, Հոդված 1 և Հոդված 2, <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=20872>

6. Decision of the Secretary-General's Policy Committee, May 2007

7. Colleen Burke, "Women and Militarism", Women's International League for Peace and Freedom (WILPF) file:///C:/Users/Lida/Desktop/Current/1325%20module/women_and_militarism_1998_043.pdf

Հապավումների ցանկ

ԱԳՆ	Արտաքին գործերի նախարարություն
ԱԺ	Ազգային ժողով
ԳԱԾ	Գործողությունների ազգային ծրագիր
ԼՂ	Լեռնային Ղարաբաղ
ԿԳՆ	Կրթության և գիտության նախարարություն
ԿԽԱ	Կին խաղաղաշինարարների համաշխարհային ցանց
ԿԽՀԾ	«Կին խաղաղաշինարարների համաշխարհային ցանց»
ԿՆԽՎԿ	Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա
ՀԱԲ	Հասարակություն առանց բռնության
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՄԱԿ ԱԽ	Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհուրդ
ՆՏԱ	Ներքին տեղահանված անձ
ՊՆ	Պաշտպանության նախարարություն

«Կանայք, խաղաղություն, անվտանգություն» օրակարգի շրջանակներում ՄԱԿ Անվտանգության խորհրդի 1325 և 1820 բանաձևերի տեղայնացում:

Ղասընթացի կառուցվածքը

Օր 1

Ժամը	Թեմա	Մեթոդ	Արդյունք	Վարող/ վարողի հմտություններ	Անհրաժեշտ պարագաներ
9:30-10:00	Մասնակիցների ժամանում և գրանցում	Մասնակիցների գրանցման թերթիկի լրացում	Դասընթացի թեմայի վերաբերյալ մասնակիցների նախնական գիտելիքի մասին տեղեկատվությունը հավաքագրված է:	Դասընթացի կազմակերպիչ Կազմակերպության ներկայացուցիչ	Մասնակիցների գրանցման թերթիկ Նախադասընթացային գնահատման հարցաթերթ
10:00-10:15	Ողջույնի խոսք	Կազմակերպիչները ներկայանում են և հակիրճ ներկայացնում իրենց կազմակերպությունը:	Մասնակիցները ծանոթանում են դասընթացի կազմակերպիչ հանդիսացող կազմակերպություններին և դրանց գործունեությանը:	Դասընթացի կազմակերպիչներ Հրավիրված հյուրեր, փորձագետներ Դասընթացավարներ	Բարձրախոս, համակարգիչ և պրոյեկտոր
10:15-10:30	Ծանոթացում	Դասընթացավարի օգնությամբ մասնակիցներն վարժության միջոցով ծանոթանում են միմյանց հետ՝ ստեղծելով ջերմ աշխատանքային մթնոլորտ:	Մասնակիցները, դասընթացավարները, կազմակերպիչները և հյուրերը ծանոթ են միմյանց հետ:	Դասընթացավարներ Դասընթացի կազմակերպիչներ	Բարձրախոս, գունավոր թղթեր

10:30-11:00	<p>Ծրագրի և դասընթացի նպատակների ներկայացում</p> <p>Դասընթացի ակնկալիքների վեր հանում և մի քանի հիմնական կանոնների մշակում:</p>	<p>Ծրագրի հակիրճ ներկայացում, որի շրջանակներում իրականացվում է դասընթացը:</p> <p>Դասընթացի նպատակի, օրակարգի, սպասվող արդյունքների և հետագա քայլերի ներկայացում:</p> <p>Մասնակիցները վարժության միջոցով դուրս են բերում իրենց ակնկալիքները դասընթացից և իրենք իրենցից: Այնուհետև դասընթացավարի օգնությամբ մշակվում է մի քանի հիմնական կանոն, որին բոլորը պարտավորվում են հետևել դասընթացի ընթացքում:</p>	<ul style="list-style-type: none"> • Մասնակիցները տեղյակ են դասընթացի նպատակի և ակնկալվող արդյունքների մասին: • Դասընթացավարներին և կազմակերպիչներին հայտնի է մասնակիցների ակնկալիքները դասընթացից: • Դասընթացի կանոնները մշակված են: 	Դասընթացավար	Ֆիլպչարտ, մարկեր, բարձրախոս, համակարգիչ և պրոյեկտոր
11:00-11:45	«Գենդեր» տերմինի ուսումնասիրություն	Խմբային աշխատանք և ինտերակտիվ քննարկում:	Մասնակիցներն ունեն հստակ պատկերացում «գենդեր» եզրույթի, ինչպես նաև օրենքներում և կյանքի սոցիալ-մշակութային ասպեկտներում գենդերային հավասարության կարևորության մասին:	Գենդերային էքսպերտ	Ֆիլպչարտ և մարկեր
Սուրճի/թնյի ընդմիջում					
12:00-13:00	Զինված հակամարտության վերլուծություն	<p>Խմբային աշխատանք</p> <p>Դասընթացավարը բարձրացնում է զինված հակամարտության և կանանց վրա դրա ազդեցության վերաբերյալ հարցադրումներ, որոնք նախ հերթով քննարկվում են փոքր խմբերում, այնուհետև մասնակիցները կարծիքներ են փոխանակում մեծ խմբով: Դասընթացավարն ամփոփում է՝ տրամադրելով համապատասխան տեղեկատվություն:</p>	Մասնակիցներն ունեն հստակ պատկերացում հակամարտության հիմնական պատճառների ու հատկապես կանանց և աղջիկների վրա դրա ազդեցության ու հետևանքների, հակամարտության կարգավորման, խաղաղաշինական ռազմավարությունների, ինչպես նաև այդ գործընթացներում կանանց դերի վերաբերյալ:	Զինված հակամարտության և կանանց վրա կոնֆլիկտի ազդեցության թեմայով փորձագետ	<p>Ֆիլպչարտ, մարկեր, բարձրախոս, համակարգիչ և պրոյեկտոր</p> <p>Մասնակիցներին ուղղորդող հարցեր</p>
12:00-13:00					

14: 00-16:15	ՄԱԿ-ի ԱԽ 1325, 1820 և հարակից բանաձևեր	Դասընթացավարը ներկայացնում է ՄԱԿ-ի ԱԽ 1325, 1820 և հարակից բանաձևերը: Խմբային քննարկում ԿԻՍԱ բանաձևերի իրականացման գործում կառավարության, տեղական իշխանությունների և քաղաքացիական հասարակության դերի մասին:	Մասնակիցներն իրազեկ են ՄԱԿ-ի ԱԽ 1325 և 1820 բանաձևերի, ինչպես նաև բանաձևերի իրականացման գործում կառավարության, տեղական իշխանությունների և քաղաքացիական հասարակության դերի մասին:	ՄԱԿ-ի ԱԽ բանաձևերի և մարդու իրավունքների փորձագետ	Ֆլիպչարտ, մարկեր, համակարգիչ և պրոյեկտոր ՄԱԿ ԱԽ-ի 1325 և 1820 բանաձևեր Մասնակիցներին ուղորդող հարցեր
16:15-17:15	Ներպետական իրավական և քաղաքական միջավայրը կանանց իրավունքների վերաբերյալ	Դասընթացավարը ներկայացնում է ներպետական օրենսդրությամբ կանանց իրավունքներին վերաբերող առկա օրենքները, որոնք կարող են հիմք հանդիսանալ ՄԱԿԱԽ 1325 բանաձևի վերաբերյալ ԳԱԾի ստեղծման համար:	Մասնակիցներն իրազեկվում են ներպետական օրենսդրությանը՝ կանանց իրավունքների, ինչպես նաև ԿԻՍԱ օրակարգի հետ փոխկապակցված ՀՀ օրենսդրական բազային վերաբերյալ:	ՀՀ օրենսդրական կարգավորումներին լավատեղյակ դասընթացավար	Ֆլիպչարտ, մարկեր, համակարգիչ և պրոյեկտոր
Սուրճի/թեյի ընդմիջում					
17:30-18:30	Խաղաղաշինական նախաձեռնությունները և Հայաստանում ԿԻՍԱ բանաձևերի իրականացման ընդհանուր նկարագիրը, ձեռքբերումները և մարտահրավերները	Դասընթացավարը ներկայացնում է Հայաստանում իրականացված խաղաղաշինական նախաձեռնությունները, ինչպես նաև առկա խնդիրները:	Մասնակիցները իրազեկվում են տարբեր խաղաղաշինական նախաձեռնությունների մասին, մասնավորապես ինչպես կարող են իրենք աջակցել և մասնակցել այդ գործընթացին:	Դասընթացավարներ	Համակարգիչ և պրոյեկտոր «ԿԻՍԱ օրակարգի շրջանակներում խաղաղաշինական ծրագրերի քարտեզագրում» հետազոտություն

Ժամը	Թեմա	Մեթոդ	Արդյունք	Վարող/ վարողի հմտություններ	Անհրաժեշտ պարագաներ
09:30-09:45	Նախորդ օրվա ամփոփում	Ինտերակտիվ քննարկման միջոցով ամփոփել նախորդ օրը:	Մասնակիցները վերհիշում են նախորդ աշխատանքային օրվա ընթացքում ծավալված քննարկման հիմնական դրույթները:	Մասնակիցներ Դասընթացավարներ	Ֆլիպչարտ, մարկեր, Համակարգիչ և պրոյեկտոր
09:45-10:45	Տեղայնացումը՝ որպես ԿԻԱ բանաձևերի իրականացման ռազմավարություն	Մասնակիցներին ներկայացնել բանաձևերի տեղայնացումը որպես ռազմավարություն, ինչպես նաև ձեռքբերումները ու մարտահրավերները այլ երկրներում իրականացված տեղայնացման ծրագրերի:	<ul style="list-style-type: none"> Մասնակիցները գիտելիքներ են ձեռք բերում բանաձևերի տեղայնացման, ինչպես նաև Հայաստանում դրանց կիրառման վերաբերյալ: Մասնակիցները ծանոթանում են այլ երկրներում իրականացված տեղայնացման ծրագրերին: 	Դասընթացավարներ	Համակարգիչ և պրոյեկտոր
Սուրճի/թնյի ընդմիջում					
10:15-10:30					
11:00-12:00	<ul style="list-style-type: none"> Տեղական համայնքներում կանանց և աղջիկների խաղաղության և անվտանգության խաթարման առանցքային հարցերի բացահայտում Համայնքներում կանանց և աղջիկներին վերաբերող խնդիրների լուծման ուղղված ռազմավարությունների ձևավորում 	Խմբային աշխատանք և ինտերակտիվ քննարկում	Մասնակիցներն անդրադառնում և վեր են հանում այն խնդիրները, որոնք ազդում են համայնքներում կանանց և աղջիկների անվտանգությանն և առաջարկում են դրանց ուղղված լուծումներ:	Դասընթացավարներ	Ֆլիպչարտ և մարկեր

12:00-13:00	<ul style="list-style-type: none"> Խաղաղության, անվտանգության, զարգացման և լավ կառավարման միջև առկա կապի վերլուծություն Քննարկում ԿԽԱ բանաձևերի և Կայուն զարգացման նպատակների միջև կապի վերաբերյալ 	<p>Խմբային աշխատանք և ինտերակտիվ քննարկում խաղաղության, անվտանգության, զարգացման և լավ կառավարման միջև կապի վերաբերյալ: Քննարկումը պետք է ներառի նաև բնական ռեսուրսների և շրջակա միջավայրի (ներառյալ ջրի և էներգետիկ ռեսուրսների) օգտագործումն և կառավարումը, ինչպես նաև դրանց ազդեցությունը կանանց, խաղաղության և անվտանգության վրա:</p>	<p>Մասնակիցները իրազեկվում են խաղաղության, անվտանգության զարգացման և լավ կառավարման միջև փոխհարաբերությունների՝ ներառյալ բնական ռեսուրսների կառավարման և շրջակա միջավայրի մասին:</p>	Դասընթացավարներ	Ֆլիպչարտ, մարկեր, համակարգիչ, պրոյեկտոր և թղթեր
-------------	--	---	--	-----------------	---

Ճ ա շ

14:00-15:00	<p>Տեղական ինքնակառավարման մարմինների կառուցվածքը, մանդատը և պարտավորությունները ԿԽԱ բանաձևերի տեղայնացման վերաբերյալ</p> <p>ԿԽԱ բանաձևերի վերաբերյալ տեղական գործողությունների պլանների և/կամ տեղական օրենսդրության նախագծում</p>	<p>Դասընթացավարը ներկայացնում է տեղական ինքնակառավարման մարմինների կառուցվածքը, մանդատը և պարտավորությունները բանաձևերի տեղայնացման շրջանակում:</p>	<p>Մասնակիցները իրազեկվում են տեղական ինքնակառավարման մարմինների պարտավորություններին՝ բանաձևերի տեղայնացման վերաբերյալ և նախագծում են տեղական գործողությունների պլաններ:</p>	Դասընթացավարներ	Համակարգիչ և պրոյեկտոր
-------------	--	---	---	-----------------	------------------------

15:00-16:15	<p>Բանաձևերի տեղայնացմանը ուղղված հանձնախմբի և գործառույթների ձևավորում</p>	<p>Մասնակիցների կողմից առաջադրանքների իրականացման համար հանձնախմբի ընտրություն</p>	<p>Տեղականացման հանձնախումբ է ձևավորվում՝ բանաձևերի տեղայնացման համար համակարգված աշխատանք կազմակերպելու</p>	Դասընթացավարներ	Ֆլիպչարտ և մարկեր,
-------------	---	--	--	-----------------	--------------------

Ս Ո Ւ Ը Ն Ի / Թ Ն Յ Ի Ղ Ն Ղ Մ Ի Զ Ո Ւ Մ

16:15-16:30

16:30-17:30	Դասընթացի ամփոփում	<ul style="list-style-type: none"> • Դասընթացավարն ամփոփում է երկօրյա դասընթացը հարցուպատասխանի միջոցով: • Մասնակիցները լրացնում են հետդասընթացային հարցաթերթերը: • Դասընթացի կազմակերպիչները և դասընթացավարները մասնակիցներին շնորհում են մասնակցության վկայականներ: 	<p>Մասնակիցները անհատական և կոլեկտիվ պարտավորություններ են ստանձնում բանաձևերի արդյունավետ իրականացման ուղղությամբ:</p> <p>Մասնակիցների կողմից յուրացված գիտելիքի մասին տեղեկատվությունը հավաքագրված է:</p> <p>Մասնակիցներն ունեն դասընթացի մասնակցության վկայականներ:</p>	<p>Դասընթացի կազմակերպիչներ Հրավիրված հյուրեր և փորձագետներ</p> <p>Դասընթացավարներ</p>	<p>Հետդասընթացային հարցաթերթեր</p> <p>Վկայականներ</p>
-------------	--------------------	--	--	--	---

Վարժություն 1.

Ծանոթացում

Նպատակ Ծանոթանալ մասնակիցների և դասընթացի կազմակերպչական թիմի հետ:

Տևողություն 15 րոպե

Անհրաժեշտ նյութեր _____

Ընթացք Ներկայացնել մասնակիցներին դասընթացի կազմակերպչական թիմը, դասընթացավարներին և ծրագիրը ֆինանսավորող կառույցի ներկայացուցիչներին:

Վարժության տարբերակ 1. Խնդրել մասնակիցներին, որպեսզի ներկայացնեն իրենց՝ պատասխանելով հետևյալ հարցերին.

1. Ո՞ր քաղաքից/համայնքից եք:
2. Ո՞ր կառույցն եք ներկայացնում:
3. Նշե՞ք Ձեզ ամենաշատը բնորոշող մի հատկանիշ:

Վարժության տարբերակ 2. Ափսեի մեջ դնել գունավոր շոկոլադե դրաժեններ (օրինակ՝ m&m's), և խնդրել մասնակիցներին, որ յուրաքանչյուրը վերցնի երկու տարբեր գույնի դրաժե: Շոկոլադե դրաժենների յուրաքանչյուր գույն ունի իր հարցը, որին պետք է մասնակիցը պատասխանի: Օրինակ՝

- Դեղին-Որտե՞ղ է գտնվում Ձեր ամենասիրելի վայրը:
- Շագանակագույն-Եթե ունենայիք կախարդական փայտիկ, ի՞նչ երազանք կիրականացնեիք:
- Կարմիր-Ի՞նչ հոբբի ունեք:
- Կանաչ-Ո՞րն է Ձեր երազանքի աշխատանքը:
- Նարնջագույն-Մի անեկդոտ պատմե՛ք:

Հարցերին պատասխանելուց հետո մասնակիցները կարող են ուտել շոկոլադը

Վարժության տարբերակ 3. Մասնակիցներին հարցեր բաժանել խաղաղության, գենդերային հավասարության և կանանց իրավունքների հետ կապված: Խնդրել նրանց հարցերը պատասխանելուց առաջ ասեն, որ համայնքն են ներկայացնում և որ կառույցում են աշխատում:

Հարցերի օրինակներ՝

1. Ինչ է խաղաղությունը Ձեզ համար:
2. Ինչ աշխատանքներ կարող է անել կինը:
3. Կարո՞ղ է կինը մասնակցել խաղաղության բանակցային գործընթացներին:
4. Ինչպե՞ս կդադարեցնեք պատերազմը:
5. Կամարոյոք Հայաստանում գենդերային հավասարություն:
6. Ինչ կապ կա խաղաղության և գենդերային հավասարության միջև:
7. Արդյո՞ք կինը պետք է զբաղեցնի նշանակալից պաշտոններ:
8. Կարո՞ղ է կինը մասնակցել խաղաղաշինական գործընթացներին: Եթե այո, ապա ինչպե՞ս:
9. Կարո՞ղ է Հայաստանը ունենալ կին նախագահ:
10. Կան արդյոք կին ղեկավարներ Ձեր համայնքում:
11. Ըստ Ձեզ, որո՞նք են կնոջ ուժեղ կողմերը:
12. Ո՞վ է եղել Ձեր կյանքում կարևոր դեր զբաղեցրած կինը:
13. Եթե դուստր ունենայիք, կցանկանայի՞ք, որ նա լիներ նախարար:
14. Կան աշխատանքներ Հայաստանում, որոնք միայն կանայք կարող են անել:
15. Ունեցե՞լ եք արդյոք Ձեր մարզում կին առաջնորդներ:
16. Եթե ընտրելու լինեիք Ձեր ղեկավարին, կընտրեի՞ք կին, թե՞ տղամարդ ղեկավար:
17. Ըստ Ձեզ կանայք ենթարկվու՞մ են բռնության Ձեր համայնքում:
18. Ինչպե՞ս կարող են կանայք ներդրում ունենալ Ձեր համայնքի զարգացման մեջ:
19. Կցանկանայի՞ք Ձեր SHU-ում ավելի շատ կանայք ներգրավված լինեին: Ինչու՞:
20. Ինչ փոփոխություններ կարող են բերել կին ղեկավարները կառավարման ոլորտում:
21. Ըստ Ձեզ, ո՞րն է ամենամեծ խնդիրը կանանց համար Ձեր համայնքում:

Վարժույթ 2.

Կանոնների մշակում, ակնկալիքների հստակեցում

Նպատակ	<ol style="list-style-type: none">1. Մասնակիցների հետ մշակել կանոններ, որոնք կնպաստեն դասընթացի արդյունավետ ընթացքին:2. Հնարավորություն տալ մասնակիցներին կիսել իրենց ակնկալիքները դասընթացից:
Տևողություն	30 րոպե
Անհրաժեշտ նյութեր	Ֆլիպչարտ, մարկերներ, գունավոր կաշուն թղթեր
Ընթացք	<ol style="list-style-type: none">1. <i>Կանոնների մշակում</i>-Մասնակիցներին տեղեկացնել, որ համատեղ աշխատանքը ավելի արդյունավետ կազմակերպելու համար պետք է մշակենք կանոններ: Տալ մի քանի կանոնի օրինակ. անջատել հեռախոսի ձայնը, հարգել միմյանց կարծիքը, հերթով խոսել: Ֆլիպչարտի վրա գրել միայն այն կանոնները, որոնց հետ ամբողջ խումբը համաձայն է:2. <i>Ակնկալիքների կիսում</i>-Ֆլիպչարտի վրա նկարել օդապարիկ: Մասնակիցներին ներկայացնել օդապարիկի նշանակությունը այս պարագայում: Օդապարիկի միջոցով նրանք այս երկու օրվա ընթացքում ճանապարհորդելու և նոր բացահայտումներ են անելու: Օդապարիկը միայն վեր կբարձրանա այն պարագայում, երբ մենք այն «կլիցքավորենք» մեր ակնկալիքներով: Խնդրել մասնակիցներին, որպեսզի նրանք կաշուն թղթիկների վրա գրեն իրենց ակնկալիքները, «մեկ թերթիկ = մեկ ակնկալիք» սկզբունքով: Այնուհետև խնդրել, որպեսզի մեկ-մեկ մոտենան, ներկայացնեն ակնկալիքները և փակցնեն օդապարիկի գնդի վրա: <p>Ակնկալիքներին անդրադառնալ հաջորդ օրը դասընթացի ամփոփման ժամանակ:</p>

Վարժություն 3.

«Գենդեր» Եզրույթի սահմանում

Նպատակ	Ուսումնասիրել «գենդեր» տերմինը և հստակ պատկերացում կազմել գենդերային դերերի և գենդերային կարծրատիպերի մասին:
Տևողություն	45 րոպե
Անհրաժեշտ նյութեր	Ֆլիպչարտ, մարկերներ
Ընթացք	Ֆլիպչարտը բաժանել երեք մասի: Առաջին սյունյակը անվանել «մասնագիտություն/տնային գործեր», իսկ երկրորդ և երրորդ սյունակներում գրել «տղամարդ» և «կին» համապատասխանաբար:

Մասնակիցների հետ մտազրոհ անել, որի ընթացքում նրանք պետք է թվարկեն մասնագիտություններ և տնային գործերի օրինակներ, որոնք պետք է գրի առնել ֆլիպչարտի առաջին սյունյակում: Երբ մտազրոհը ավարտվի, մասնակիցներին հարցնել, որ մասնագիտությունները/տնային գործերը ավելի շատ տղամարդիկ են անում, և որոնք կանայք: Համապատասխան սյունյակներում պատասխանների դիմաց «✓» նշել:

Քննարկում ծավալել հետևյալ հարցերի շուրջ՝

1. Ինչո՞վ է պայմանավորված այն հանգամանքը, որ կան հստակ մասնագիտություններ/գործեր, որտեղ կանայք ավելի շատ են ներգրավված, քան տղամարդիկ, և հակառակը:
2. Արդյո՞ք կանայք չեն կարող անել այն աշխատանքները, որոնք հիմնականում տղամարդիկ են անում, և հակառակը:
3. Ի՞նչ սահմանափակումներ է դնում մեր հասարակությունը կանանց վրա:

«Սեռ» տերմինը բնութագրում է կանանց և տղամարդկանց կենսաբանական, ֆիզիկական, ֆիզիոլոգիական և բնության կողմից տրված այլ առանձնահատկությունները: «Գենդեր»

հասկացությունը ցույց է տալիս կնոջ և տղամարդու միջև առկա սոցիալական տարբերությունները և հասարակության կողմից նրանց տրված դերերը: Այսինքն՝ այս պարագայում նկատի ունենք այն հատկանիշները, ակնկալիքները, վարքագծի կանոնները, որոնք կնոջը և տղամարդուն տվել է ոչ թե բնությունը, այլ հասարակությունը: Գենդերն, այլ խոսքերով, «հասարակական կամ սոցիալական սեռն է», որն ավելին է, քան կենսաբանական սեռը:

Գենդերային հավասարությունը նշանակում է հավասար հնարավորություններ, իրավունքներ և պարտականություններ թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց համար:

Օգտակար հղումներ

1. ՀՀ օրենքը կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին, <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=83841>
2. Հայաստանի գենդերային իրավիճակի գնահատում, <https://www.adb.org/sites/default/files/institutional-document/178897/arm-country-gender-assessment-hy.pdf>
3. Կին և տղամարդ՝ տարբեր, բայց հավասար, <http://bit.ly/2GZrTIL>

Վարժություն 4. | Հակամարտության վերլուծություն («Բառերի սրճարան», Word cafe)

Նպատակ

Պարզել, թե ինչպես է հակամարտությունն ազդում կանանց և աղջիկների վրա, և ինչպիսի դեր նրանք ունեն/կարող են ունենալ դրա լուծման հարցում:

Տևողություն

1 ժամ

Անհրաժեշտ նյութեր

Ֆլիպչարտի թղթեր, մարկերներ, թղթե սկոչ

Ընթացք

Սենյակի դասավորվածություն-առանձնացնել 4 սեղան, որոնց շուրջ դնել աթոռներ (սրճարանային տարածքի նման): Սեղանները համարակալել 1-4:

Բաժանել մասնակիցներին 4 փոքր խմբերի՝ հաշվելով 1-4: Մասնակիցներին ասել, որ յուրաքանչյուր խումբ կանգնի իր համարին համապատասխանող սեղանի շուրջ: Ամեն մի սեղանի վրա դնել ֆլիպչարտի թուղթ, որի վրա գրված կլինեն հետևյալ հարցերից մեկը՝

Սեղան 1. Որո՞նք են ԼՂ հակամարտության հիմնական պատճառները:

Սեղան 2. Ինչպե՞ս է հակամարտությունը ազդում երկրի, համայնքի, և հատկապես կանանց և աղջիկների վրա:

Սեղան 3. Ինչպիսի՞ քայլեր են ձեռնարկվել/պետք է ձեռնարկվեն, որպեսզի կարգավորվի կոնֆլիկտը:

Սեղան 4. Ինչպիսի՞ն է կանանց դերը կոնֆլիկտի կանխարգելման, կարգավորման և խաղաղաշինական գործընթացներում:

Խմբերին տրվում է 10 րոպե ժամանակ՝ տվյալ սեղանի շուրջ համապատասխան հարցը քննարկելու և գրառումներ անելու համար: Խմբին ասել, որ 10 րոպե տրված հարցը քննարկելուց հետո փոխատեղման (ռոտացիայի) կարգով իրենք փոխելու են սեղանը և հաջորդ ժամանակահատվածում աշխատելու են մյուս սեղանի/հարցի շուրջ: Եվ այդպես՝ մինչև անցնեն բոլոր սեղաններով և վերադառնան իրենց առաջին սեղանին:

Սեղանը փոխելուց խմբերը պետք է ուսումնասիրեն նախորդ խմբի/խմբերի աշխատանքը և ֆլիպչարտի վրա գրի առնեն միայն այն մտքերը, որոնք բացակայում են մյուս խմբերի մոտ: Աստիճանաբար պետք է արագացնել ընթացքը՝ համապատասխանաբար տրամադրելով 8, 7, 6 և 5 րոպե յուրաքանչյուր փոխատեղման ժամանակ, քանի որ գնալով լրացումներ կատարելը նվազելու է:

Անհրաժեշտ տեղեկություն

Երբ խմբերը վերադառնան իրենց սեղանի մոտ, պետք է նրանց տրամադրել 5 րոպե ժամանակ, որպեսզի նրանք ամբողջացնեն բոլոր գրառումները և ներկայացնեն հարցի համապարփակ պատասխանը:

Վերջին տասնամյակի ընթացքում հակամարտությունների թիվը զգալիորեն աճել է: Միայն Աֆրիկայում պետություն-

ների ¼ 1990-ականներին զինված հակամարտության մեջ էր: Այսօրվա հակամարտություններում գլխավոր թիրախը խաղաղ բնակչությունն է:

Համարյա բոլոր հասարակություններում հակամարտությունից առաջ բռնությունը և խտրականությունը կանանց նկատմամբ միևնույն է առկա է: Կանայք համարվում են տվյալ ազգի, հասարակության կամ համայնքի վերարտադրողականությունն ապահովողները, հետևաբար կանանց թիրախավորելը և նրանց երկարատև տրավմաներ հասցնելն ուղղակիորեն ազդում է կանանց՝ տվյալ հանրույթում ինտեգրվելու և ազգի վերարտադրողական գործընթացների մաս կազմելու վրա: Այս ամենին ավելանում են գենդերային կարծրատիպերը:

Տղամարդիկ գնում են կռվի դաշտ, իսկ կինը մնում է տանը, որպեսզի հոգ տանի ընտանիքի անդամների մասին: Ընտանիքի ամբողջ բեռը մնում է կնոջ վրա: Պատերազմական իրավիճակում ֆիզիկական բռնությունը կնոջ դեմ նպատակ ունի նվաստացնել կնոջը և հիմնականում նպաստում է նրան, որ կինը մերժվի հասարակության կողմից և մեկուսացվի: Բոսնիայում և Հերցեգովինայում և Ռուանդայում հակամարտության ժամանակ բռնաբարությունը օգտագործվում էր որպես էթնիկ զտումների միջոց: Սիերա Լեոնեյում, Ուգանդայում և Ռուանդայում, կանանց «նվիրում» էին զինվորներին որպես պարգևատրում:

Կանայք լինելով հակամարտության մեջ ամենատուժած և խոցելի խմբերից մեկը, միևնույն է դուրս են մնում հակամարտության կարգավորման գործընթացից: Պետք է ընդունել, որ կնոջ դերը տարեց տարի աճում է հակամարտության կարգավորման ոչ պաշտոնական գործընթացներում: Սակայն այդ ներդրումը շատ հաճախ ճանաչում չի ստանում հենց նույն հասարակության կողմից:

Օգտակար հղումներ

1. «Կանայք, խաղաղություն և անվտանգություն. Պատերազմի անտեսանելի կողմը», <http://bit.ly/2t4qYy7>
2. «The Effects of Armed Conflict on Girls and Women», https://www.tandfonline.com/doi/pdf/10.1207/s15327949pac0404_6
3. «Impact of Armed Conflict on Women and Girls», <http://www.securitycouncilreport.org/atf/cf/%7B65BFCF9B-6D27-4E9C-8CD3-CF6E4FF96FF9%7D/WPS%202010%20Sidebar2.pdf>

Վարժություն 5.

Լավ կառավարման դրական շրջան

Նպատակ	Նպաստել լավ կառավարման, ինչպես նաև դրա հիմնական դրույթների մասին մասնակիցների ունեցած տեղեկության բարձրացմանը:
Տևողություն	1 ժամ
Անրաժեշտ նյութեր	Ֆիլպչարտ, մարկեր
Ընթացք	<p>Ֆիլպչարտի վրա նախապես գրել լավ կառավարման հիմնական 9 բաղադրիչները այնպես, որ յուրաքանչյուր բաղադրիչ ավելացումների տեղ ունենա ֆիլպչարտի վրա: Այնուհետև անդրադառնալ յուրաքանչյուր բաղադրիչին՝ շեշտադրելով հետևյալ հարցերը.</p> <ul style="list-style-type: none">• Ինչ է հասկանում լսարանը սույն բաղադրիչի ներքո:• Ինչքանով է տվյալ բաղադրիչը կիրառվում իրենց համայնքում/շրջանում/երկրում կառավարման ժամանակ:• Ինչ ավելացումներ կարելի է անել: <p>Բոլոր 9 բաղադրիչների քննարկումից հետո անհրաժեշտ է լսարանին ցույց տալ լավ կառավարման շրջանը՝ նշելով այն հանգամանքը, որ լավ կառավարման համար անհրաժեշտ բոլոր 9 կետերի առկայությունը նպաստում է կայուն զարգացման, խաղաղության և անվտանգության:</p>

Լավ կառավարման 9 կարևորագույն բաղադրիչներն են.

- **Մասնակցություն:** բոլոր կանայք և տղամարդիկ որոշումների կայացման մեջ ուղղակի կամ իրավասու ներկայացուցչական հաստատությունների միջոցով մասնակցության հնարավորություն պետք է ունենան:
- **Օրենքի գերակայություն:** իրավական նորմերը պետք է կիրառվեն, խթանվեն և իրացվեն անաչառ հիմունքներով:
- **Թափանցիկություն:** թափանցիկությունը ստեղծվում է տեղեկության ազատ հոսքի հիմքի վրա: Գործընթացները, հաստատությունները և տեղեկությունը հասանելի են այն մարդկանց համար, ովքեր առնչվում են նշված երևույթների հետ: Ապահովված է բավարար թափանցիկություն՝

հաստատությունները, գործընթացները և շրջանառվող տեղեկությունները մշտադիտարկելու համար:

- **Արդյունավետ** արձագանքում (Responsiveness): հաստատությունները և գործընթացները աշխատում են բոլորի համար:

Վարժույթ 6.

ԿԽԱ բանաձևերի տեղայնացում

Նպատակ	Ներկայացնել մասնակիցներին տեղայնացումը որպես ԿԽԱ օրակարգի բանաձևերի իրականացման ռազմավարություն:
Տևողություն	1 ժամ
Անհրաժեշտ նյութեր	Համակարգիչ, պրոյեկտոր
Ընթացք	<p>Տեղայնացման ծրագիրը երաշխավորում է ՄԱԿ ԱԽ 1325 և հարակից բանաձևերի արդյունավետ իրականացումը: Ծրագիրը ապահովում է ներքևից վերև գնացող մոտեցում, ներառելով տեղական, ազգային, տարածաշրջանային և միջազգային քաղաքականությունը և փորձը: Այն կապ է ապահովում համայնքների, կառավարության և քաղաքացիական հասարակության միջև:</p> <p>Տեղայնացման ծրագիրը հնարավորություն է տալիս տեղական իշխանություններին անմիջական մասնակցություն ունենալ բանաձևերի դրույթների իրականացման գործընթացում:</p> <p>Ծրագրի ամենակարևոր նպատակներից մեկը ԿԽԱ բանաձևերի համապատասխանեցումն ու հարմարեցումն է տեղական, համայնքի իրականությանը, ներգրավվելով թե՛ տեղական իշխանություններին, թե՛ համայնքի բնակիչներին: Համապատասխանեցման արդյունքում ՄԱԿ ԱԽ 1325 և հարակից բանաձևերի դրույթները ինտեգրվում են տեղական օրենսդրության և համայնքային զարգացման ծրագրերի մեջ: Տեղայնացման ծրագրի հաջողված օրինակներ՝</p> <ul style="list-style-type: none">• Նեպալ-ՄԱԿ ԱԽ 1325 և 1820 բանաձևերի մասին

դասընթացները ներառվել են դպրոցական ծրագրերում, ինչպես նաև ուստիկանության և բանակի անձնակազմերի համար վերապատրաստումների ծրագրերում:

- Ֆիլիպիններ-Քուեզոն նահանգի Ռեալի քաղաքապետարանում ընդունվեց բանաձև, որը երաշխավորում է տեղական կառավարման մարմիններում կանանց 50% ներկայացուցչությունը: Կալինգա նահանգի Ավանդական խաղաղության խորհրդի կազմում ներառվել են 4 կին, մինչ այդ ներգրավված էին միայն տղամարդիկ:

- Սիերա Լիոնե-Գործողությունների ազգային ծրագրի վերաբերյալ ստեղծվել են Տեղական ղեկավարման կոմիտեներ՝ ապահովելու համար ծրագրի իրականացումը: Ավելին, տեղական պաշտոնյաների կատարողականի գնահատման և հաշվետվությունների մաս է կազմում Գործողությունների ազգային ծրագրի իրականացման գնահատումը համայնքի մակարդակում:

Օգտակար հղումներ

1. Inspiring Locally, Implementing Globally: Localization of UNSCR 1325 and 1820, <http://gnwp.org/program/inspiring-locally-implementing-globally-localization-of-unscr-1325-and-1820/>
2. GNWP's localization of UNSCR 1325, <https://www.slideshare.net/ddcentr/gnwps-localization-of-unscr-1325-amp-1820-program-sept-22-2015>
3. Localizing UNSCR 1325 in Colombia, Nepal, the Philippines, Sierra Leone, and Uganda, <http://bit.ly/1T4VPzF>

Վարժույթ 7.

Կանանց անվտանգությանը սպառնացող խնդիրները

Նպատակ

1. Վեր հանել այն խնդիրները, որոնք սպառնում են կանանց անվտանգությանը ներկայացված համայնքներում:
2. Մշակել առաջարկներ, որոնք ուղղված կլինեն այդ խնդիրների լուծմանը:

Տևողություն

1 ժամ

Անհրաժեշտ նյութեր

Ֆլիպչարտի թղթեր, մարկերներ, գունավոր կաշուն թղթեր

Ընթացք

Բաժանել մասնակիցներին 2 կամ 3 խմբերի (կախված խմբի քանակից): Հնարավորության դեպքում խմբերը բաժանել ըստ համայնքների/քաղաքների, որպեսզի ավելի համակարգված լինի աշխատանքը:

Խմբերին տալ 30 րոպե ժամանակ քննարկել և գրի առնել հետևյալ հարցերի պատասխանները՝

1. Որո՞նք են այն խնդիրները, որ սպառնում են կանանց անվտանգությանը Ձեր համայնքում:
2. Ի՞նչ լուծում/քայլեր պետք է ձեռնարկել, որպեսզի այդ խնդիրները կարգավորվեն:

Մասնակիցներին խնդրել, որ ընդհանուր պատասխանների փոխարեն հնարավորինս հստակ, կոնկրետ պատասխաններ տան:

Անհրաժեշտ տեղեկություն

Յուրաքանչյուր խումբ պետք է ներկայացնի իր աշխատանքի արդյունքները:

ԼՂ հակամարտության ժամանակ կանանցից շատերը տեղահանվել են, ենթարկվել են բռնության, կորցրել են իրենց հարազատներին, և ի վերջո ապրել են վախի և բռնության մթնոլորտում: Սակայն այս ամենին ոչ մեկ չի անդրադարձել: Զինադադարի կնքումից հետո երկրի սոցիալ-տնտեսական վիճակի, ինչպես նաև կանանց հիմնախնդիրների ոչ առաջնային լինելու պատճառով չստեղծվեցին համապատասխան մեխանիզմներ կանանց ֆիզիկական և հոգեբանական անհրաժեշտ օգնություն ցուցաբերելու, ինչպես նաև նրանց նկատմամբ կատարված պատերազմական հանցագործությունները փաստագրելու և հանցագործներին պատժելու ուղղությամբ:

ԼՂ հակամարտությունը մինչ օրս ազդում է թե՛ Հայաստանում, թե՛ Ղարաբաղում բնակվող կանանց վրա: Պատերազմից հետո հոգեբանական ծանր ապրումների հետևանքով կանանց մոտ առաջացան մի շարք առողջական խնդիրներ (շաքարային դիաբետ, կանացի օրգանների շարունակական խնդիրներ, կրծքի քաղցկեղ): Շատերը չեն կարողանում լուծել իրենց առողջական խնդիրները, քանի որ բուժօգնությունը անհասանելի է թե՛ ֆինանսական միջոցների սղության

պատճառով, թե՛ սահմանային գոտում ապրելու պատճառով: Մինչ օրս շատ ՆՏԱ-ներ և փախստականներ ապրում են ժամանակավոր կացարանների անմխիթար պայմաններում: Մեկ այլ խնդիր է հանդիսանում կանանց բավականին ցածր մասնակցությունը որոշումների ընդունման և խաղարարական գործընթացներում: Կանայք դուրս են մնում բանակցային գործընթացներից թե՛ ներպետական, թե՛ միջազգային մակարդակներում:

Օգտակար հղումներ

1. «ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի 1325 բանաձև. Քաղաքացիական հասարակության 2014թ. մշտադիտարկման զեկույց», <http://bit.ly/2oDIT9J>
2. «Արցախ. պատերազմը կանանց աչքերով», <http://women-net.am/artsakh/>

Վարժություն 8.

Տեղայնացման պլանի մշակում

Նպատակ

1. Օգնել մասնակիցներին վեր հանել այն խնդիրները, որոնք առկա են համայնքում կանանց և աղջիկների շրջանում:
2. Մշակել հստակ քայլեր, որոնք կնպաստեն այդ խնդիրների լուծմանը:
3. Մասնակիցների հետ որոշել, թե ովքեր են պատասխանատու այդ քայլերի իրականացման համար:

Տևողություն

3 ժամ 30 րոպե

Անհրաժեշտ նյութեր

Ֆլիպչարտի թղթեր, մարկերներ, գունավոր կաշուն թղթեր

Ընթաց

Մաս 1. Մասնակիցներին բաժանել 3 կամ 4 խմբերի, յուրաքանչյուր խմբում առնվազն 6 հոգի: Ցանկալի է խմբերը բաժանել ըստ համայնքների, որպեսզի ավելի համակարգված լինի աշխատանքը:

Խմբերին տալ լրացնելու հետևյալ աղյուսակը.

Խնդիր	Քայլ/լուծում	Ժամանակահատված	Պատասխանատու

Խմբերին ասել, որ աղյուսակի մեջ գրեն այն կարևոր խնդիրները, որոնք վտանգում են կանանց և աղջիկների խաղաղությունը իրենց համայնքներում: Դրանից հետո նրանք պետք է մշակեն հստակ քայլեր, որոնք ուղղված կլինեն այդ խնդիրների լուծմանը: Քայլերի դիմաց մասնակիցները նույնպես պետք է նշեն, թե ներկաներից ով է պատասխանատու այդ քայլի իրականացման համար: Եվ իհարկե, պետք է նաև նշվի այդ լուծման համար անհրաժեշտ ժամանակահատվածը:

Մաս 2. Երբ մասնակիցները ավարտեն խմբերում աշխատանքը, յուրաքանչյուր խումբ պետք է ներկայացնի իր աշխատանքի արդյունքը: Այդ ընթացքում շատ կարևոր է մեկ անգամ ևս նշել, թե մասնակիցներից ով է պատասխանատու լինելու խնդիրների լուծման համար:

Անհրաժեշտ տեղեկություն

Մասնակիցներին ճիշտ ուղղորդելու համար անհրաժեշտ է ծանոթանալ տվյալ համայնքի/մարզի կառուցվածքին, պարզելու համար, թե մարզպետարանի որ կառույցներ կարող են իրենց աշխատանքում առնչվել ԿԽԱ բանաձևերի իրականացման հետ: Կարող ենք առաձնացնել մարզպետարանի հետևյալ բաժինները/վարչությունները՝

1. Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչություն-վերահսկում է համայնքի բյուջեի օգտագործումը:
2. Առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն-իրագործում է բնակչության պետական սոցիալական ապահովության և առողջապահական ծրագրերը, հերթագրում է բնակարանի կարիք ունեցող փախստականների, զրհված կամ հաշմանդամ դարձած զինծառայողների ընտանիքներին, ապահովում է փախստականների սոցիալ-տնտեսական երաշխիքները, տրամադրում է կենսաթոշակներ, նպաստներ և հաշվառում

է գործազուրկներին:

3. Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժին-մշակում և իրականացնում է ընտանիքների, կանանց և երեխաների պաշտպանությանն ուղղված ծրագրեր:

4. Զարգացման ծրագրերի և վերլուծության բաժին-ապահովում է մարզի զարգացման ծրագրերի մշակման, քննարկման և հաստատման աշխատանքների կատարումը:

Օգտակար հղումներ

1. ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն-<http://mtad.am/hy/>

Վարժություն 9.

Օրվա ամփոփում

Նպատակ

Մասնակիցներին տրամադրել հարթակ հստակեցնելու համար օրվա ընթացքում առաջացած հարցերը և կիսվելու իրենց մտորումներով/բացահայտումներով:

Տևողություն

15 րոպե

Անհրաժեշտ նյութեր

—

Բաժանվող նյութեր

Բաց քննարկում ծավալել հետևյալ հարցերի շուրջ՝

1. Ինչպե՞ս եք Ձեզ զգում:
2. Արդյո՞ք կան հարցեր, որոնք հստակեցման կարիք ունեն:
3. Եթե չեք հասցրել արտահայտվել որևէ հարցի շուրջ օրվա ընթացքում, հիմա կարող եք դա անել:

Հիշեցնել մասնակիցներին, որ ժամին է վաղը սկսվելու դասընթացը:

ՍԵՄԻՆԱՐ 1.

ՄԱԿ ԱԽ 1325 և 1820
բանաձևեր. ընդհանուր
դրույթների ներկայացում

Նպատակ	Բարձրացնել մասնակիցների իրազեկվածության մակարդակը ԿԽԱ օրակարգի հիմնասյուն համարվող ՄԱԿ ԱԽ 1325 և այս բանաձևին կից 1820 բանաձևի էության, իրականացման մեխանիզմների և առանձնահատկությունների շուրջ:
Տևողություն	1 ժամ 45 րոպե, որից 60 րոպեն նախատեսված է նյութի ներկայացման համար, 45 րոպե վարժանքի համար
Դասընթացավարին անհրաժեշտ նյութեր	Համակարգիչ, PowerPoint Presentation, Ֆլիպչարտ, մարկեր
Բաժանվող նյութեր	ՄԱԿ ԱԽ 1325 և 1820 բանաձևեր (հայերեն թարգմանությունն առկա է)

ՍԵՄԻՆԱՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Դասընթացավարին: Սեմինարի սկզբում անհրաժեշտ է տեղեկություն տրամադրել ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի ստեղծման պատմության, ինչպես նաև բանաձևի կարևորության մասին: Ստորև դասընթացավարը կարող է գտնել համապարփակ տեղեկություն ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի, առանձնահատկությունների, ինչպես նաև կիրառման մեխանիզմների մասին:

Չնայած այն հանգամանքին, որ կանայք երկար տարիների ընթացքում մասնակցել են զինված հակամարտություններին որպես մարտիկներ, ինչպես նաև կրել են զինված հակամարտությունների քայքայիչ ազդեցությունը, այնուամենայնիվ, գիտական գրկանության մեջ միայն վերջին տասնամյակներում է անդրադարձ կատարվում կնոջ՝ հակամարտություններում ունեցած մասնակցությանը և կրած կորուստներին:

Գրականության ճնշող մեծամասնությունը կնոջը ներկայացնում է որպես պատերազմական զոհ: Սա մի կողմից ներկայացնում է օբյեկտիվ իրականությունը, քանի որ կանայք և երեխաները կազմում են պատերազմական զոհերի շուրջ 80%-ը,⁸ սակայն այսպիսի շեշտադրումները, մյուս կողմից, նսեմացնում են կնոջ դերը զինված հակամարտությունների փոխակերպման, բանակցային գործընթացների և որոշումների կայացման ժամանակ, որի պատճառով էլ կանայք հիմնականում դուրս են մնում նշված գործընթացներից:

«Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգը իրենից ներկայացնում է միջազգային այնպիսի քաղաքականություն, որը ուղղակիորեն շեշտադրում է հակամարտության հաղթահարման բոլոր ոլորտներում կանանց ներգրավվածության հրատապությունը և կարևորությունը: Չնայած որ դեռևս 2-րդ համաշխարհային պատերազմից հետո միջազգային հանրությունը ակտիվորեն ջատագովում էր հակամարտությունների ժամանակ կանանց ծայնի և հիմնախնդիրների բարձրացման շուրջ, այնուամենայնիվ, սույն օրակարգը ձևավորվել է միայն 2000 թ-ին՝ ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի ընդունման ժամանակ: Վերջինս համարվում է հիմնաքարային փաստաթուղթ, քանի որ 1325 բանաձևը ՄԱԿ ԱԽ-ի կողմից ընդունված առաջին բանաձևն է կանանց, խաղաղության և անվտանգության մասին, որը շեշտադրում է հակամարտության՝ կանանց և տղամարդկանց վրա ունեցած հավասար, բայց միևնույն ժամանակ տարբերվող ազդեցությունը, ինչպես նաև բանակցային, վերականգնողական և հետկոնֆլիկտային իրավիճակներում կանանց հավասար մասնակցության կարևորությունը:

Սույն բանաձևն Անվտանգության խորհրդի կողմից ընդունվել է 2000 թ-ի հոկտեմբերի 31-ին միաձայն՝ ՄԱԿ ԱԽ-ի 4213-րդ նստաշրջանում: Համարվում է ամենաշատ թարգմանված բանաձևերից մեկը. թարգմանվել է ավելի քան 60 լեզուներով: Բանաձևը նաև առաջ է քաշում կոնֆլիկտային և հետկոնֆլիկտային իրավիճակներում իրականացվող ամենատարբեր գործողությունների (ճգնաժամային միջամտություն, մարդասիրական օգնության տրամադրում, բանակցային գործընթացներ, որոշումների կայացում և այլն) գենդերազգայնության բարձրացման կարևորությունը:

Դասընթացավարին: ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի ստեղծման պատմության ամփոփիչ հատվածում ևս մեկ անգամ կարևոր է նշել սույն բանաձևի կարևոր հատկանշները.

- ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևը «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգին նվիրված ՄԱԿ ԱԽ պատմության մեջ առաջին բանաձևն է:
- Ճանաչում է կանանց ակտիվ մասնակցությունը զինված հակամարտություններում. սա մի կողմից շեշտադրում է այն հանգամանքը, որ կանայք ոչ միայն պատերազմի զոհեր, այլև ակտիվ մասնակիցներ են, ուստի կանայք պետք է և անհրաժեշտ է, որ հավասարապես մասնակցեն

8. «Կանայք, խաղաղություն և անվտանգություն օրակարգի շրջանակներում խաղաղաշինական ծրագրերի քարտեզագրում» հետազոտություն, էջ. 6-9, «Հասարակություն առանց բռնության» ՀԿ, հղումը՝ <http://www.swv.am/index.php/hy/what-we-do-am/publications-am>

որոշումների կայացման և բանակցային գործընթացներում, մյուս կողմից էլ սույն ձևակերպումը շեշտադրում է, որ կանայք հավասարապես տուժում են պատերազմից, ուստի ավելի քան կարևոր է ստեղծել հատուկ մեխանիզմներ կանանց նկատմամբ բռնությունը կանխարգելելու, ինչպես նաև վերականգնողական գործընթացներում կանանց գենդերազգային օգնություն տրամադրելու համար:

- **Բանաձևը** կոչ է անում ՄԱԿ անդամ բոլոր երկրներին ձեռնարկել համապատասխան միջոցառումներ և ստեղծել անհրաժեշտ մեխանիզմներ, որոնք կնպաստեն որոշումների կայացման և բանակցային գործընթացներում կանանց մասնակցության բարձրացմանը:

Դասընթացավարին: Առաջին մասն ամփոփելուց հետո պետք է անդրադարձ կատարել ՄԱԿ Ան 1325 բանաձևի 4 հիմնասյուներին, որոնք ինչպես 1325 բանաձևի, այնպես էլ «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգի հիմնասյուներն են համարվում: Ստորև ներկայացված են 4 հիմնասյուները՝ հակիրճ բացատրությամբ:

- **Մասնակցություն.** բանաձևը կոչ է անում ՄԱԿ անդամ երկրներին հանձն առնել համապատասխան քայլեր՝ բարձրացնելու 1. կանանց մասնակցությունը որոշումների կայացման ոլորտում ինչպես ազգային, այնպես էլ տարածաշրջանային և միջազգային մակարդակներում, 2. բանակցային, կոնֆլիկտների կառավարման, ինչպես նաև խաղաղաշինական և խաղաղարարական գործընթացներում, 3. խաղաղապահական առաքելություններում, ուստիկանությունում, զինված ուժերում, 4. ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարությունում որպես հատուկ ներկայացուցիչներ:

- **Պաշտպանություն.** բանաձևը կոչ է անում ստեղծել հատուկ պաշտպանական մեխանիզմներ, որպեսզի կոնֆլիկտային, հետկոնֆլիկտային, ճգնաժամային իրավիճակներում, նաև փախստականների ճամբարներում կանայք և աղջիկները պաշտպանված լինեն գենդերային հիմք ունեցող բռնություններից, հատկապես սեռական բռնությունից և բռնաբարություններից:

- **Կանխարգելում.** կոչ է անում բարելավել միջամտության ռազմավարությունները, որպեսզի կանխվի կանանց և աղջիկների նկատմամբ բռնությունը: Ռազմավարություններն ընդգրկում են հանցագործների հետապնդման և պատժման արդյունավետ մեխանիզմները, նաև ազգային օրենսդրության մեջ կանանց և աղջիկների իրավունքների պաշտպանությանն ուղղված մեխանիզմների բարելավումը, կանանց կողմից իրականացվող խաղաղաշինական և գենդերազգային ծրագրերի սատարումը:

- **Վերականգնում.** Կոչ է անում իրականացնել վերականգնողական արդյունավետ և գենդերազգային աշխատանքներ: Կարևոր է գենդերազգային մոտեցում ցուցաբերել փախստականների ճամբարները ստեղծելու,

ինչպես նաև մարդասիրական օգնություն կազմակերպելու գործընթացներում (օրինակ անվտանգության ապահովում, մարդասիրական օգնության ժամանակ կանանց ֆիզիոլոգիական հատուկ պահանջներին համապատասխան հիգիենայի միջոցների ապահովում և այլն):

Դասընթացավարին: Հիմնասյունների ներկայացումից հետո պետք է անդրադարձ կատարել ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի իրականացման մեխանիզմներին:

ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևն անդրադարձ է կատարում ընդհանուր այն հիմնախնդիրներին, որոնց կանայք և աղջիկները հանդիպում են զինված հակամարտությունների ժամանակ: Սակայն դրանց հաղթահարման կոնկրետ մեխանիզմներ չի առաջարկում: Ինչու՞: Որովհետև յուրաքանչյուր պետություն ունի մշակութային, քաղաքական, սոցիալտնտեսական, գենդերային և այլ առանձնահատկություններ: Ուստի յուրաքանչյուր պետություն պետք է ստեղծի դրույթների իրականացման իր իսկ ծրագիրը՝ գործողությունների ազգային ծրագիրը: Այսինքն ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի դրույթների իրականացումը հնարավոր է դառնում ԳԱԾ-երի միջոցով:

ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի դրույթների ոչ միշտ է, որ պատշաճ ձևով իրականացվում է պետությունների կողմից ոչ արդյունավետ կիրառման մեխանիզմներ բացակայության հետևանքով: Սասնկցիաների կիրառման համակարգը բացակայում է: 2017 թ-ի հոկտեմբեր ամսվա տվյալներով 74 երկիր⁹ արդեն իսկ ունի ԳԱԾ: Հայաստանի Հանրապետությունը սույն մոդուլի կազմման ժամանակ չի ունեցել ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի իրականացմանն ուղղված ԳԱԾ:

Դասընթացավարին: ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի համապարփակ ներկայացումից հետո անհրաժեշտ է անդրադարձ կատարել բանաձևին կից, փոխլրացնող այլ բանաձևերին ևս: Այս դեպքում հիմնականում ներկայացվում է ՄԱԿ ԱԽ 1820 բանաձևը:

Զինված հակամարտությունների կամ պատերազմների ժամանակ կանանց և աղջիկների (այդ թվում նաև տղամարդկանց և տղաների) նկատմամբ կիրառվող սեռական բռնությունը, ինչպես նաև բռնաբարությունները համարվել են պատերազմի այնպիսի իրողություններ, որոնք անխուսափելի երևույթ են եղել, այսինքն դրանց դեմ պայքարելն ուղղակի անհմաստ է համարվել: Ավելին, երկար դարեր և հազարամյակներ դրանք որպես պատերազմական հանցագործություններ չեն դիտարկվել, ուստի մի կողմից հանցագործություն իրականացնողները չեն պատժվել, ինչն էլ իր հերթին ավելի սանձարձակ իրավիճակ է ստեղծել, մյուս կողմից էլ զոհերը համապատասխան օգնություն չեն ստացել: Ցավոք հակամարտության այս մշակույթը մինչ օրս շարունակում է իր գոյությունը. կանխարգելիչ և վերականգնողական մեխանիզմների բացակայությունը, գենդերային կարծրատիպերը, զոհերի կրկնակի զոհականացումը, քաղաքական կամքի բացակայությունը և մի շարք այլ գործոններ

9. <http://www.peacewomen.org/member-states>

ուղղակի «լռեցնում են» պատերազմի ժամանակ սեռական բռնության ենթարկված կամ բռնաբարված կանանց:

«Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգի ստեղծմանը զուգընթաց էլ ավելի ակտիվացան միջազգային հանրության կողմից պատերազմական բռնաբարությունների և սեռական բռնությունների քննադատումը: Չնայած խնդրի հրատապությանը՝ ընդամենը 10 տարի առաջ է ՄԱԿ ԱԽ-ի կողմից կատարվել լուրջ քայլ սեռական բնույթի պատերազմական հանցագործությունները սահմանելու և քննադատելու ուղղությամբ: Այս քայլերից մեկն է համարվում ՄԱԿ ԱԽ 1820 բանաձևի ընդունումը:

1820 բանաձևն ընդունվել է Անվտանգության խորհրդի կողմից 2008 թ-ի հունիսի 19-ին՝ միաձայն:¹⁰ Բանաձևը դատապարտում է հակամարտությունների ժամանակ սեռական բռնությունների իրականացումը և սահմանում է, որ բռնաբարությունը սեռական բռնության այլ տեսակների հետ միասին համարվում են պատերազմական հանցագործություններ, մարդկության դեմ ուղղված հանցագործություններ կամ այնպիսի գործողություններ, որոնք մարդկությանը հասցված վնասով հավասարազոր են ցեղասպանություն¹¹: Սույն բանաձևի միջոցով ՄԱԿ-ը նաև սահմանեց այն դրույթը, ըստ որի բռնաբարությունը համարվում է պատերազմական մարտավարություն կամ, ինչպես ընդունված է ասել, պատերազմական զենք, որը կարող է լուրջ սպառնալիք համարվել համաշխարհային անվտանգության համար:

Ինչպես արդեն իսկ նշվեց, 1820 բանաձևը փոխլրացնում է ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևին և վերահաստատում է այն դրույթը, ըստ որի սեռական բռնությունը և բռնաբարությունները համարվում են պատերազմական հանցագործություններ: Ուստի անդամ պետությունները պարտավոր են իրականացնել կանխարգելիչ միջոցառումներ, որոնց կարևոր մաս են կազմում հանրության իրազեկման և զորքերի վերապատրաստմանն ուղղված աշխատանքները՝ խաղաղ բնակչության անվտանգությունն ապահովելու համար:

ՄԱԿ ԱԽ 1820 բանաձևի դրույթները պետք է տեղ գտնեն ՄԱԽ ԱԽ 1325 բանաձևի դրույթների իրականացմանն ուղղված ԳԱԾ-ի մեջ:

Դասընթացավարին: Բանաձևերի ներկայացումից հետո կարևոր է անդրադարձ կատարել այն մարտահրավերներին, որոնք առկա են ՄԱԿ ԱԽ 1325 և 1820 բանաձևերի շուրջ:

- ՀՀ-ում, ինչպես նաև ողջ աշխարհում խորացող ռազմականացման պատճառով կանանց մասնակցության դրույթը դիտարկվում է հիմնականում ուժային կառույցներում կանանց ընդգրկելու տեսանկյունից: Սա մի կողմից էլ ավելի է ուժեղացնում ռազմականացումը, մյուս կողմից էլ չի կարևորում կանանց մասնակցությունը որոշումների կայացման և բանակցային գործընթացներում:

10. <http://www.securitycouncilreport.org/atf/cf/%7B65BFCF9B-6D27-4E9C-8CD3-CF6E4FF96FF9%7D/CAC%20S%20RES%201820.pdf>

11. http://www.scielo.br/scielo.php?pid=S1806-64452009000100003&script=sci_arttext&tlng=en

- Խաղաղաշինական ծրագրերի խոցելիության պատճառով շատ դանդաղ է ընթանում բանաձևի, ինչպես նաև կանանց խաղաղաշինական գործունեության լուսաբանման գործընթացները, ինչի պատճառով բանաձևի շուրջ ԳԱԾ-ի ստեղծման և տեղայնացման դինամիկան բավականին դանդաղ է, բացակայում է քաղիասարակություն-կառավարություն կապը, չկան ոլորտում հաղորդակցման և համագործակցության արդյունավետ մեխանիզմներ:
- Հակամարտությունից անմիջականորեն տուժած կանանց խնդիրների ցածր լուսաբանվածության պատճառով ցածր է նրանց իրավիճակի մասին հասարակության լայն շերտերի իրազեկվածության մակարդակը:
- Հայրիշխանական համակարգում կնոջ ունեցած ցածր կարգավիճակի պատճառով զինված հակամարտությունների ժամանակ կանանց հիմնախնդիրները և նրանց հանդիպող մարտահրավերները ևս մնում են չկարևորված:

Դասընթացավարին: Ներկայացված մարտահրավերների ցուցակը կարելի է համալրել նաև այլ մարտահրավերներով: Այս հատվածը քննարկային է, շատ կարևոր է սեմինարի մասնակիցների ակտիվ մասնակցությունը:

Վարժանք

Նպատակ	Նպաստել ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի դրույթների մասին մասնակիցների մոտ գործնական պատկերացումների ձևավորմանը:
Տևողություն	45 րոպե
Անրաժեշտ նյութեր	Ֆիլպչարտ, մարկեր
Ընթացք	Խմբին բաժանել 3 մասի, ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի հիմնական 18 դրույթները բաժանել խմբերի միջև. 1-6-րդ դրույթներ 1-ին խումբ, 7-12-րդ դրույթներ 2-րդ խումբ, 13-18-րդ դրույթներ 3-րդ խումբ: Խմբերը պետք է պատասխանեն հետևյալ հարցերին. <ul style="list-style-type: none"> • Ինչքանով է տվյալ դրույթը կարևոր տվյալ համայնքի/շրջանի/երկրի համար: • Ո՞ր դրույթների կամ դրույթների դր հատվածի ուղղությամբ

են իրականացվում աշխատանքներ տվյալ համայնքում/ շրջանում/երկրում:

- Ըստ խմբի անդամների, տվյալ դրույթի արդյունավետ իրականացման համար ինչ քայլեր պետք է ձեռնարկվեն: Խմբերին տրամադրել 15 րոպե քննարկման և ֆիլպչարտի վրա արդյունքները գրելու համար: Այնուհետև յուրաքանչյուր խմբին տրամադրել 10 րոպե հակիրճ ներկայացման և մի քանի հարցի պատասխանելու համար:

Օգտակար հղումներ

Կանայք, գենդեր և զինված հակամարտություններ, հղումը՝ <https://www.oecd.org/dac/gender-development/44896284.pdf>
Ինչ է ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևը, հղումը՝ https://www.usip.org/gender_peacebuilding/about_UNSCR_1325
Սեռական բռնությունը որպես պատերազմական զենք, հղումները՝ <https://www.unicef.org/sowc96pk/sexviol.htm>
<http://www.ohchr.org/en/newsevents/pages/rapeweaponwar.aspx>
Կանայք, խաղաղություն և անվտանգություն, հղումը՝ <https://www.un.org/ruleoflaw/files/womenpeaceandsecurity.pdf>

ՍԵՄԻՆԱՐ 2

ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի իրականացմանը նպաստող մեխանիզմներ և գործընթացներ

Նպատակ

Բարձրացնել մասնակիցների իրազեկվածության մակարդակը ՀՀ-ում ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի դրույթների իրականացմանն ուղղված, ինչպես նաև ԳԱԾ-ի ստեղծմանն աջակցող աշխատանքների մասին:

Տևողություն

1 ժամ

Դասընթացավարին անհրաժեշտ նյութեր

Համակարգիչ, PowerPoint Presentation, Ֆիլպչարտ, մարկեր

ՄԵՄԻՆԱՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Դասընթացավարին: Հաշվի առնելով այն հանագամանքը, որ մասնակիցները իրազեկվածության տարբեր մակարդակներ ունեն, բացի այդ ընդհանրապես շատ ցածր է խաղաղաշինական ոչ միայն ծրագրերի, այլև տեսության մասին հասարակության լայն շերտերի իրազեկվածության մակարդակը, դասընթացը անհրաժեշտ է սկսել եզրույթների սահմանումով և մեկնաբանությամբ:

Խաղաղաշինական գործընթացները ՀՀ-ում սկսվել են դեռևս 1990-ականների սկզբներին: Հետպատերազմական ժամանակահատվածում ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում սկսեցին իրականացվել մի շարք խաղաղաշինական ծրագրեր, որոնք կոչված են եղել հայ-ադրբեջանական հարաբերությունների բարելավմանը: Սակայն ծրագրերը կրել են ընդհանուր բնույթ, հիմնականում չեն ունեցել գենդերազգայունություն և գենդերային հատուկ ուղղվածություն:

Պատերազմից տուժած կանանց և աղջիկների իրավիճակի ուսումնասիրության շուրջ համապետական մակարդակով դեռևս ոչ մի հետազոտություն չի իրականացվել: Այնուամենայնիվ, քաղհասարակության կողմից իրականացվել են մի շարք միջոցառումներ՝ կոնֆլիկտային և հետկոնֆլիկտային իրավիճակներում կանանց իրավիճակի ներկայացման և խնդիրների լուսաբանման ուղղությամբ: Կատարվել են աշխատանքներ նաև ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի շուրջ ԳԱԾ-ի ստեղծմանն անհրաժեշտ նախապայմաններ ստեղծելու համար: Այսպիսով, նախքան իրականացված աշխատանքների ներկայացումը, անդրադառնանք մի քանի եզրույթների՝ սկսելով հենց խաղաղության սահմանումից:

«Խաղաղություն» եզրույթն ունի տարբեր մեկնաբանություններ: Ամեն մարդ թերևս ունի խաղաղության իր տեսլականը: Ուստի կարևոր է խմբի հետ սահմանել խաղաղությունը, որպեսզի ստեղծվի մեկ ընդհանուր պատկերացում այս երևույթի նկատմամբ:

Օքսֆորդյան բառարանները խաղաղությունը սահմանում են 2 տեսանկյունից.¹²

- Էմոցիոնալ խաղաղություն. մարդ ազատ է ճնշվածությունից և անհանգստությունից, գտնվում է հանգստության մեջ:
- Իրավիճակ կամ ժամանակահատված, երբ չկա պատերազմ:

Ինչպես տեսնում ենք 2 իրարից տարբերվող, բայց միևնույն ժամանակ իրարով պայմանավորված երևույթներ են ներկայացված: «Խաղաղություն» եզրույթը առավել խորը ներկայացնելու ցանկության դեպքում դասընթացավարը կարող է նաև

12. <https://en.oxforddictionaries.com/definition/peace>

ուսումնասիրել Մերիամ Վեբստերի մոտեցումները¹³:

“International Alert” միջազգային կազմակերպությունը խաղաղությունը սահմանում է հետևյալ կերպ.¹⁴

Իրավիճակ, երբ մարդիկ ի վիճակի են լուծել իրենց կոնֆլիկտներն առանց բռնության, կարողանում են աշխատել համատեղ՝ կյանքի պայմանները բարելավելու համար:

- Բոլորն ապրում են անվտանգության մեջ՝ առանց բռնության նկատմամբ վախի: Բռնության ոչ մի տեսակ չի հանդուրժվում օրենքով:
- Բոլորն օրենքի առջև հավասար են, առկա է վստահելի արդարադատության համակարգ, արդար և արդյունավետ օրենքները պաշտպանում են մարդկանց իրավունքները:
- Բոլորը կարող են մասնակցել որոշումների կայացման գործընթացին, կառավարությունը հաշվետու է մարդկանց առջև:
- Մնունդը, մաքուր ջուրը, կացարանը, կրթությունը, առողջապահությունը հասանելի են բոլորին հավասարապես:
- Բոլորն ունեն աշխատելու հավասար հնարավորություններ՝ անկախ գենդերից, էթնիկ ծագումից և այլն:

Դասընթացավարին: “International Alert”-ի սահմանումը և կից կետերը անդրադառնում են հետկոնֆլիկտային իրավիճակում արդյունավետ կառավարման (good governance) հաստատման համար անհրաժեշտ կարևորագույն դրույթներին: Ուստի կետերը պետք է քննարկվեն ինտերակտիվ՝ ընդգրկելով հնարավորինս շատ մասնակիցների: Քննարկման ժամանակ անհրաժեշտ է շեշտադրել հետևյալ հարցը. **ինչքանով է տվյալ դրույթն իրականացվում մասնակիցների համայնքում/ քաղաքում/երկրում:**

Ինչպես արդեն իսկ նշվել է ՀՀ-ում ընդհանուր իրազեկվածությունը խաղաղաշինական ծրագրերի, ինչպես նաև ոլորտին վերաբերող եզրույթների վերաբերյալ բավականին ցածր մակարդակի վրա է գտնվում: Խաղաղաշինություն, խաղաղարարություն կամ խաղաղապահություն. սրանք բառեր են: Տերմիններից յուրաքանչյուրը բնութագրում է հստակ գործընթաց, ուստի եզրույթների ճիշտ և տեղին կիրառումը շատ կարևոր է: Ստորև ներկայացված են եզրույթները՝ բացատրություններով¹⁵:

- Խաղաղադարարություն (peacemaking). ներառում է բանակցային կամ դիվանագիտական գործընթացները կամ այն գործընթացները, որոնք ուղղված են հակամարտող կողմերին բանակցային սեղանի շուրջ բերելուն:
- Խաղաղաշինություն (peacebuilding). ներառում է խաղաղության հասնելու գործողություններ, որոնք իրականացվում են ոչ միայն պաշտոնատար, այլև ոչ պաշտոնատար անձանց կողմից (ՀԿ-ներ, քաղհասարակության տարբեր դերակատարներ և այլն): Միջոցառումները թիրախավորում են հասարակության լայն զանգվածներին, կրում են երկարատև և լայնածաված

13. <https://www.merriam-webster.com/dictionary/peace>

14. <http://www.international-alert.org/what-is-peace>

15. <https://lop.parl.ca/Content/LOP/ResearchPublicationsArchive/inbrief1000/prb0406-e.asp>

բնույթ:

- Խաղաղապահություն (peacekeeping). ուղղված են կոնֆլիկտային իրավիճակից հետևող կոնֆլիկտային իրավիճակ անցում կատարելու գործընթացների հեշտացմանը: Աշխատանքները կատարվում են հիմնականում զինված ուժերի միջոցով (օր.՝ ՄԱԿ-ի խաղաղապահները), որոնք պետք է պահպանեն անկողմնակալություն և դրսևորեն ոչ բռնի վարք, կարևոր է հակամարտող կողմերի կամ տվյալ պետության/սուվերեն սուբյեկտի համաձայնության առկայությունը:

Դասընթացավարին: Վերոնշյալ 3 եզրույթների ներկայացումն ավելի ինտերակտիվ դարձնելու համար դասընթացավարը կարող է դիմել մասնակիցներին՝ խնդրելով մեկնաբանել յուրաքանչյուր եզրույթ: 3-5 կարծիք լսելուց հետո անհրաժեշտ է ամփոփել՝ ներկայացնելով դրույթների սահմանումները:

ՀՀ-ում ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի դրույթների իրականացմանն ուղղված ԳԱԾ-ի ստեղծման աշխատանքները բավականին դանդաղ են ընթանում: Վերջին տասնամյակում ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի շուրջ իրականացված առաջին լուրջ քայլերից մեկը կարելի է համարել ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի հայաստանյան մշտադիտարկման խմբի ստեղծումը: 2013 թ-ին վերապատրաստողական համապատասխան դասընթացներից հետո քաղհասարակության 7 ՀԿ-ներ ստեղծեցին ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի շուրջ մշտադիտարկում իրականացնող խումբը:¹⁶

Մշտադիտարկում իրականացնող խմբի կողմից պատրաստած զեկույցները ստորև.

- **Քաղաքացիական հասարակության 2013 թ-ի ՀՀ մշտադիտարկման զեկույց (վերաբերում է 2012 թ-ին)**

Հանդիսանում է ԿԽՀՑ-ի 2014 թ-ի միջազգային զեկույցի մաս:

- **Քաղաքացիական հասարակության 2014 թ-ի ՀՀ մշտադիտարկման զեկույց¹⁷ (պատրաստվել է 2015 թ-ին)**

2014 թ-ին «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ-ն պատրաստել է ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի մշտադիտարկման զեկույց Լեռնային Ղարաբաղի մասով:

ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի իրազեկման և ԳԱԾ-ի ստեղծման աշխատանքներին նպաստելու համար մի շարք հանդիպումներ և կլոր սեղան քննարկումներ են կազմակերպվել Հայաստանում Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի դեսպանատների, Հյուսիսատլանտյան դաշինքի և մի շարք այլ ՀԿ-ների կողմից:

Դասընթացավարին: Կարևոր է անդրադարձ կատարել ոլորտում առկա այն մարտահրավերներին, որոնք խոչընդոտում են ՀՀ-ում «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգի արդյունավետությանը:

16. Խմբի անդամներն են. «Գորիսի Կանանց զարգացման ռեսուրս կենտրոն» հիմնադրամ, «Դեմոկրատիան այսօր» ՀԿ, «Խաղաղության երկխոսություն» ՀԿ, «Կանանց իրավունքների կենտրոն» ՀԿ, «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ, «Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիա», «Հասարակություն առանց բռնության» ՀԿ:

17. http://www.swv.am/attachments/article/1223/%D5%84%D4%B1%D4%BF_%D4%B1%D4%BD_1325_%D4%B2%D5%A1%D5%B6%D5%A1%D5%B1%D6%87_%D4%B6%D5%A5%D5%AF%D5%B8%D6%82%D5%B5%D6%81.pdf

• **Քաղաքական կամքի բացակայություն**

Հայրիշխանական ռազմականացման հետևանքով կանանց հիմնախնդիրները կարևորված չեն: Կանանց խնդիրների անտեսանելիությանն է նպաստում այնպիսի հարթակների բացակայությունը, որտեղ կոնֆլիկտից անմիջականորեն տուժած կանայք կկարողանան բարձրաձայնել իրենց հիմնախնդիրները և կոնֆլիկտի հաղթահարման մասին իրենց տեսլականները:

• **Ոչ միասնականություն, արդյունավետ հաղորդակցման մեխանիզմների բացակայություն**

ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի դրույթների իրականացման շուրջ ԳԱԾ-ի ստեղծման աշխատանքներն արդեն իսկ իրականացվում են մի քանի նախարարությունների կողմից (ԱԳՆ, ՊՆ, ԿԳՆ և այլն): Վարչապետի հրամանով ստեղծվել է հատուկ կոմիտե, որը զբաղվում է ԳԱԾ-ի ստեղծման աշխատանքներով: Սակայն սույն ուղեցույցի ստեղծման ժամանակ ԳԱԾ-ը դեռևս վերջնական չի եղել, բացի այդ կոմիտեի կողմից իրականացվող աշխատանքային գործընթացները եղել են խիստ փակ: Ոլորում ակտիվ ՀԿ-ները չունեն ոչ մի հավելյալ տեղեկություն ԳԱԾ-ի առկա իրավիճակի և բովանդակության մասին:

Մեկ այլ հիմնախնդիր է հանդսիանում այն, որ քաղաքացիական մեջ ևս չկա միասնականություն: Չնայած որ ոլորտում կան ակտիվ մի շարք կազմակերպություններ և ակտիվիստներ, այնուամենայնիվ, չկան արդյունավետ հաղորդակցության և համագործակցության այնպիսի մեխանիզմներ, որոնք կնպաստեն խաղաղաշինական ծրագրերի և նախաձեռնությունների արդյունավետությանը:

• **Գենդերազգայունության պակաս**

Սա հատկապես վերաբերում է որոշումների կայացման գործընթացներում ներգրավված կողմերին: Գենդերազգայունության պակասը, կանանց հիմնախնդիրների մասին ունեցած ոչ բավարար գիտելիքները, կարծրատիպային մոտեցումները և մի շարք այլ գործոններ իրենց բացասական ազդեցությունն են ունենում տարբեր տիպի ռազմավարությունների ստեղծման և դրանց իրականացման գործընթացների վրա: Սա էլ հիմք է հանդիսանում ստեղծված ռազմավարությունների անարդյունավետության համար:

• **Խորացող ռազմականացում**

Գնալով ավելի ու ավելի են ուժեղանում ռազմականացմանն ուղղված հայեցակարգերը (օր.՝ ազգ-բանակ), որոնք ավելի են խորացնում խաղաղաշինական ծրագրերի նկատմամբ ունեցած բացասական վերաբերմունքը, քանի որ թշնամու բացասական կերպարի փոխակերպմանն ուղղված ցանկացած քայլ գնահատվում է որպես դավաճանություն: Գնալով մեծանում են պետական բյուջեից զինված ուժերին հատկացվող ֆինասական

միջոցները, որի պատճառով նվազում է հատկապես կրթության և առողջապահության ոլորտներին հատկացվող միջոցները և այլն:

Դասընթացավարին: Բացի վերոնշյալ մարտահրավերներից կան այլ մարտահրավերներ ևս, որոնց դասընթացավարը կարող է անդրադառնալ սեփական հայեցողությամբ: Մարտահրավերները պետք է ներկայացնել քննարկային տարբերակով. նշել մարտահրավերը, հարթակ տրամադրել կարճատև քննարկումների համար, վերջում ամփոփել և անդրադառնալ հաջորդ մարտահրավերին:

ՍԵՄԻՆԱՐ 3

ՀՀ-ում կանանց իրավունքների պաշտպանության իրավական և քաղաքական մեխանիզմները

Նպատակ

Սեմինարի նպատակն է մասնակիցներին ծանոթացնել ՀՀ իրավաքաղաքական այն մեխանիզմներին, որոնք ուղղված են կանանց իրավունքների պաշտպանությանը, գենդերազգայունության բարձրացմանը և գենդերային բռնության դեմ պայքարին:

Տևողություն

1 ժամ

Դասընթացավարին անհրաժեշտ նյութեր

Ֆլիպչարտ, մարկեր, PowerPoint PresentationՄԱԿ ԱԽ 1325 և 1820 բանաձևեր (հայերեն թարգմանությունն առկա է)

ՍԵՄԻՆԱՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Դասընթացավարին: Նախքան իրավաքաղաքական մեխանիզմների ներկայացումը անհրաժեշտ է մասնակիցների հետ քննարկել այն իրողությունները, որոնք հիմք են հանդիսացել կանանց իրավունքների առանձնացման, գենդերային հայեցակարգերի և գենդերազգայուն քաղաքականության ստեղծման համար: Սա կնպաստի նաև գենդերային հիմնախնդիրների շուրջ մասնակիցների իրազեկվածության բարձրացմանը:

Կանանց իրավունքները մարդու իրավունքների համատեքստում առանձնացնելու գործընթացը մշտական քննադատության մեջ է գտնվում: Կանանց իրավունքների պաշտպանությանն ուղղված օրակարգը շատերի կողմից սահմանվում է որպես արհեստական, քանի որ կանանց անհավասարության կամ այլ կերպ ասած գենդերային անհավասարության հիմնախնդիրները գոյություն չունեն և համարվում են կեղծ օրակարգ:

Հետևաբար անհրաժեշտ է ներկայացնել այն պատմական իրողությունները, որոնք հիմք են հանդիսացել կանանց իրավունքների պաշտպանության հավելյալ մեխանիզմների առաջացման համար:

• Կանանց իրավունքները ոտնահարվում են ոչ միայն պետության, այլև այլ սուբյեկտների կողմից (ընտանիք, դպրոց, եկեղեցի և այլն):

Մարդու իրավունքների կարևորագույն առաքելությունն է համարվում մարդուն պաշտպանել պետությունից, որովհետև երկար դարերի ընթացքում պետության իշխանությունը եղել է անսահմանափակ: Սակայն պատմական իրողությունները ցույց են տալիս, որ կնոջ իրավունքները սահմանափակվում են ոչ միայն պետության, այլև ոչ պետական ինստիտուտների կողմից: Կանանց իրավունքները ոտնահարվում և սահմանափակվում են ընտանիքում, կրթական համակարգում, աշխատանքային ոլորտում և այլն:

• «Կանացի ինքնությանը» ավելանում են նաև այլ բնորոշիչներ. ռասա, մաշկի գույն, կրոն և այլն:

Կանանց իրավիճակի վերլուծության ժամանակ շատ կարևոր է հաշվի առնել այն հանգամանքը, որ կանայք տարբեր են և ունեն ռասայական, կրոնական, մշակութային, ազգային առանձնահատկություններ, սեռական տարբեր կողմնորոշումներ, գենդերային տարբեր դերեր և այլն: Սա էլ իր հերթին նշանակում է, որ ցանկացած փոփոխական/որոշիչ ավելի խոցելի է դարձնում կնոջը: Օրինակ սևամորթ կինը խտրականության է ենթարկվում ոչ միայն իր կենսաբանական սեռի, այլև մաշկի գույնի համար: Այսինքն այս դեպքում ավելանում է նաև ռասայական խտրականությունը:

• Մշակութային արժեքները և սովորույթները:

Գոյություն ունեն մի շարք արժեքներ և սովորույթներ, որոնք ոտնահարում և սահմանափակում են կնոջ իրավունքները: Օր.¹ կարմիր խնձորի ավանդույթը, կանանց արտաքին սեռական օրգանների թլպատումը (կտրում են ծիկը, որպեսզի կինը հաճույք չստանա, կարում են հեշտոցի մի մասը, որպեսզի սեռական հարաբերությունները լինեն ցավոտ և կինը սեռական կյանքով ապրի միայն ու միայն երեխա ունենալու համար, վաղաժամ ամուսնությունները, կարմիր խնձորի ավանդույթը և այլն):

• Կանանց նկատմամբ բռնությունը արմատավորված է համաշխարհային մշակույթում:

Երկար դարեր կանայք չեն ունեցել կրթության, աշխատանքի իրավունք, քաղաքական կյանքին մասնակցելու, ժառանգելու իրավունք և այլն:

Դասընթացավարին: Վերոնշյալ դրույթներն անհրաժեշտ է ներկայացնել ինտերակտիվ, քննարկային մեթոդներով: Ամփոփումից հետք պետք է անցում կատարել այն իրավաքաղաքական մեխանիզմներին, որոնք առկա են ՀՀ-ում և ուղղված են գենդերային հավասարության և արդարության հաստատմանը:

- 2004 թ-ի ապրիլի 8-ին ընդունվել է «ՀՀ-ում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թթ. ազգային ծրագիրը և ՀՀ-ում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թթ. ազգային ծրագրի միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N645-Ն որոշումը:
- ՀՀ Կառավարության 2010 թ-ի փետրվարի 11-ի նիստում հավանության է արժանացել «Գենդերային քաղաքականության հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N5 արձանագրային որոշումը, ՀՀ կառավարության 2011 թ-ի մայիսի 20-ի նիստում հավանության է արժանացել «Գենդերային քաղաքականության 2011-2015 թթ. ռազմավարական ծրագիրը և գենդերային քաղաքականության 2011 թ-ի միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N19 արձանագրային որոշումը,
- ՀՀ Կառավարության 2011 թ-ի հունիսի 17-ի նիստում հավանության է արժանացել «Ընդդեմ գենդերային բռնության» ազգային ծրագիրը, 2011-2015 թթ. ռազմավարական ծրագիրը և 2011 թ-ի միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին N23 արձանագրային որոշումը:

ՀՀ քաղաքացիների իրավահավասարության հիմնական երաշխիքը համարվում է ՀՀ Սահմանադրությունը (ուժի մեջ է մտել 2015 թ-ի դեկտեմբերի 22-ից):

- **Հոդված 3.** Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են:

Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան:

Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

- **Հոդված 14.1.** Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև: Խտրականությունը կախված սեռից, ռասսայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Սահմանադրության 86-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն պետության քաղաքականության հիմնական նպատակներից է համարվում «...կանանց և տղամարդկանց միջև փաստացի հավասարության խթանումը»:

Գենդերային արդարության հաստատման համար 2013 թ-ի մայիսի 20-ին ընդունվել է «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքը: Սույն օրենքի ընդունման գործընթացը բավականին բարդ է եղել: Օրենքի նախագծի սկզբնական տարբերակը ունեցել է այլ անվանում՝ «Գենդերային հավասարության մասին» օրենք: Սակայն ազգայնական, ինչպես նաև մի շարք այլ խմբերի կողմից «գենդեր» եզրույթի աղավաղված մեկնաբանությունների պատճառով օրենքի անվանումը ենթարկվեց փոփոխության:

ՀՀ ԱԳՆ-ի մեկնաբանության համաձայն, վերը նշված օրենքների և ռազմավարական ծրագրերի շրջանակներում իրականացված միջոցառումները համահունչ են ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի դրույթներին:

Գենդերային հավասարության հաստատման և կանանց իրավունքների պաշտպանության մեկ այլ մեխանիզմ է համարվում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման խորհրդի ստեղծումը. ՀՀ վարչապետի 2014 թ-ի նոյեմբերի 19-ի N 1152 Ա որոշման համաձայն վերսկսվում են խորհրդի աշխատանքները¹⁸:

Գենդերային հիմք ունեցող բռնության դեմ պայքարի մեկ այլ մեխանիզմ է համարվում «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքի ընդունումը: 2017 թ-ի դեկտեմբերին ԱԺ-ն ընդունել է օրենքը: Սույն ուղեցույցի պատրաստման ժամանակ օրենքը գտնվել է ընթացակարգերի մշակման փուլում: Այդ աշխատանքների ավարտից հետո օրենքը ամբողջությամբ կիրառման փուլ կմտնի:

2018 թ-ի մարտ ամսի դրությամբ ՀՀ-ն ունեցել է գենդերային ռազմավարության ազգային 2 ծրագրեր.

- 2004 թ., ապրիլի 8 N 645 Ն որոշում

2004-2010 թթ-ի «ՀՀ-ում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման» ազգային ծրագիրը

- 2011 թ., մայիսի 20 N19 որոշում

Հայաստանի Հանրապետության գենդերային քաղաքականության 2011-2015 թթ. ռազմավարական ծրագիր

Ուղեցույցի պատրաստման ընթացքում 2018-2022 թթ-ի ռազմավարական ծրագիրը դեռևս հաստատված չի եղել:

Դասընթացավարին: վերոնշյալ մեխանիզմները համարվում են այն հիմնական քայլերը, որոնք ուղղված են գենդերային հավասարության և արդարության հաստատմանը ՀՀ-ում: Ազգային օրենսդրության ներկայացումից հետո անհրաժեշտ է անցում կատարել միջազգային փաստաթղթերին:

ՀՀ-ն գենդերային միջազգային քաղաքականությունը սկսվել է դեռևս 1993 թ-ին՝ ԿՆԽՎԿ-ի ստորագրմամբ և վավերացմամբ: ՀՀ ԱԺ-ի կողմից վավերացրած

18. <http://www.irtek.am/views/act.aspx?aid=78088>

փաստաթղթերի ցանկը ստորև.

- **Ամուսնացած կնոջ քաղաքացիության ՄԱԿ -ի կոնվենցիա**

Ընդունվել է Միավորված ազգերի կազմակերպության ԳՎ-ի կողմից, 1957 թ-ի հունվարի 29-ին:

Վավերացվել է ՀՀ ազգային ժողովի կողմից 1994 թ-ի օգոստոսի 16-ին:

- **Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ -ի կոնվենցիա (ԿՆԽՎԿ/ CEDAW)**

Ընդունվել է Միավորված ազգերի կազմակերպության ԳՎ-ի կողմից 1979 թ-ին:

Վավերացվել է ՀՀ ազգային ժողովի կողմից 1993 թ-ի հունիսի 9-ին:

- **ՄԱԿ-ի կամընտիր արձանագրություն (ԿՆԽՎԿ)**

Ընդունվել է Միավորված ազգերի կազմակերպության ԳՎ-ի կողմից 1999 թ-ի հոկտեմբերի 6-ին:

Վավերացվել է ՀՀ ազգային ժողովի կողմից 2006 թ-ի սեպտեմբերի 14-ին:

- **Կանանց և տղամարդկանց հավասար վարձատրության մասին կոնվենցիա**

Աշխատողները վճարվում են աշխատանքի համար հավասարաչափ:

Ընդունվել է Աշխատանքի միջազգային կազմակերպության Գլխավոր խորհրդաժողովի կողմից՝ երեսունչորսերորդ նստաշրջանին, 1951 թ-ի հունիսի 29 -ին:

Վավերացվել է ՀՀ ազգային ժողովի կողմից 1995 թ-ի հուլիսի 29-ին:

- **Գործողությունների հարթակի մասին Պեկինի հռչակագիր**

Ընդունվել է կանանց չորրորդ համաշխարհային կոնֆերանսին 1995 թ-ին:

Հայաստանում ուժի մեջ է մտել 1995 թ-ին:

- **Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ ՄԱԿ-ի կոնվենցիա**

«Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման արգելման և պատժի մասին» արձանագրություն:

Ընդունվել է ԳՎ-ի 55/25 բանաձևով 2000 թ-ի նոյեմբերի 15-ին:

Վավերացվել է ՀՀ ազգային ժողովի կողմից 2003 թ-ին:

- **Աշխատանքի և զբաղվածության բնագավառում խտրականության մասին կոնվենցիա**

Ընդունվել է 1958թ-ի հուլիսի 4-ին Աշխատանքի միջազգային կազմակերպության Գլխավոր խորհրդաժողովի կողմից:

Վավերացվել է ՀՀ ազգային ժողովի կողմից 1993 թ-ին:

Դասընթացավարին: Ազգային և միջազգային իրավաքաղաքական մեխանիզմների ներկայացումից հետո անհրաժեշտ է անդրադառնալ այն մարտահրավերներին և բացերին, որոնք խոչընդոտում են առկա իրավաքաղաքական մեխանիզմների արդյունավետ իրացմանը և խթանմանը:

Ստորև ներկայացված են որոշ բացեր/մարտահրավերներ.

- Օրենսդիր և գործադիր մարմինների, ինչպես նաև արդարադատության համակարգի ներկայացուցիչների ցածր գենդերազգայունություն,
- Կանանց հիմնախնդիրների վերաբերյալ իրազեկվածության ցածր մակարդակ,
- Իրավաքաղաքական մեխանիզմների արդյունավետ իրացման և խթանման համար անհրաժեշտ քաղաքական կամքի բացակայություն,
- Գենդերային կույր քաղաքականություն (ԳԱԾ-երի և ազգային ռազմավարությունների ճնշող մեծամասնությունը չի արտացոլում և չի թիրախավորում հասարակության տարբեր սոցիալական խմբերի իրական շահերն ու կարիքները),
- Գենդերային հիմքով բռնություն,
- Պատերազմ. խորացող ռազմականացում: Պատերազմի առկայությունը շատ հաճախ օգտագործվում է որպես արդարացում մարդու իրավունքների ոտնահարման մի շարք դրսևորումների անտեսման համար,
- Կանայք, խաղաղություն և անվտանգություն օրակարգի բացակայություն: աշխատանքներ նաև ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի շուրջ ԳԱԾ-ի ստեղծմանն անհրաժեշտ

Վարժություն 1.

«Կծիկ»

Մասնակիցները կանգնում են շրջանաձև: Վարողի ձեռքում է կծիկը, նա ասում է իր անունը և կծիկը նետում որևէ մասնակցի՝ իր ձեռքում պահելով թելի ծայրը: Բռնող մասնակիցն ասում է իր անունը և նետում կծիկը մեկ ուրիշին՝ դարձյալ իր մոտ պահելով թելը: Ցանկալի է կծիկը նետել քառասյին հերթականությամբ: Երբ բոլոր մասնակիցներն ասում են անունները նրանց միջև գոյանում է սարդոստայն: Վերջինը, ում ձեռքում մնաց կծիկը ետ է նետում այն նրան, ումից ստացել էր և ասում է նրա անունը: Խաղի իմաստն անունները հիշելն է, ինչպես նաև քաղիասարակության ու տեղական ինքնակառավարման մարմինների միջև համագործակցության խթանումն է:

Վարժություն 2.

«Պիցցա»

Մասնակիցները կանգնում են շրջանաձև այնպես, որ մեկի ձեռքերը հասնեն դիմացինի ուսերին: Վարողի հրահանգով մերսում են դիմացինի մեջքն այնպես, կարծես պիցցա են պատրաստում. խմոր բացել, ձու քսել, խոզապուխտ կտրատել և այլն:

Հավելված 2

Նախադասընթացային գնահատման հարցաթերթիկ

Խնդրում ենք 1-ից 5 բալանոց սանդղակով (1 - շատ վատ, 5 - գերազանց) գնահատել սեփական կարողությունները, գիտելիքները և տեղեկացվածության մակարդակը նշված թեմաների շուրջ.

Թեմաներ

1. Գենդերային հավասարության կարևորությունը խաղաղության և անվտանգության օրակարգում

1

2

3

4

5

2. Կոնֆլիկտների վերլուծություն

1

2

3

4

5

3. «Կանայք, խաղաղություն, անվտանգություն» օրակարգ, ՄԱԿ ԱԽ 1325, 1820 և հարակից բանաձևեր

1

2

3

4

5

4. Կանանց իրավունքներին աջակցող ազգային օրենքներ և քաղաքականություններ

1

2

3

4

5

5. ՄԱԿ ԱԽ 1325, 1820 և հարակից բանաձևերի տեղայնացումը որպես «Կանայք, խաղաղություն, անվտանգություն» օրակարգի բանաձևերի իրականացման ռազմավարություն

1

2

3

4

5

6. Խաղաղության և անվտանգության, զարգացման և լավ կառավարման միջև կապը

1

2

3

4

5

7. Տեղական ինքնակառավարման մարմինների կառուցվածքը, մանդատը և պարտավորությունները «Կանայք, խաղաղություն, անվտանգություն» օրակարգի բանաձևերի իրականացման տեղայնացման, տեղական գործողությունների պլանների նախագծման շրջանակում

1

2

3

4

5

Խնդրում ենք արտահայտեք Ձեր դիրքորոշումը ներքոնշյալ պնդումների հանդեպ:

1. Ըստ Ձեզ՝ կարճ է կինը իր դերակատարումն ունենալ խաղաղաշինական, սոցիալ-քաղաքական, տնտեսական հարցերով որոշումների կայացման գործընթացներում և առհասարակ կառավարության աշխատանքներում:

Այո

Ոչ

Եթե այո, ապա որպես՝

Աջակից

Որոշում կայացնող և մասնակից խաղաղաշինական գործընթացներում

Ոստիկանության ծառայող և զինծառայող

Աջակից, ով ուտելիք է պատրաստում կամ այլ ծառայություններ է մատուցում որոշում կայացնող մարմիններին

Այլ: Խնդրում ենք, մանրամասնել՝ _____

Եթե ոչ, խնդրում ենք, բացատրել, թե ինչու:

2. Ըստ Ձեզ՝ հակամարտության ընթացքում և/կամ հակամարտության ավարտից հետո ինչու՞ է ավելանում բռնաբարության և սեռական ոտնձգությունների թիվը:

Անվտանգության բացակայության պատճառով

Կանանց ոչ պատշաճ հագուստի պատճառով

Պատերազմի ժամանակ տղամարդկանց սեռական կարիքների բավարարման պատճառով

Տղամարդկանց՝ կանանց նկատմամբ իրենց իշխանությունը ցույց տալու պատճառով

Այլ: Խնդրում ենք, մանրամասնել՝

3. Ինչպե՞ս կարող են կանայք կանխել սեռական ոտնձգությունները և/կամ բռնաբարությունը:

- Ոչինչ չասել, ոչինչ չանել
- Ոստիկանություն դիմել, պատմել ընտանիքի անդամներին իրենց հետ կատարվածի մասին
- Պայքարել իրենց իրավունքների համար
- Այլ: Խնդրում ենք, մանրամասնել՝ _____

Հետզհետե ընթացքի գնահատման հարցաթերթիկ

Խնդրում ենք 1-ից 5 բալանոց սանդղակով (1 - չափ վատ, 5 - գերազանց) գնահատել սեփական կարողությունները, գիտելիքները և տեղեկացվածության մակարդակը նշված թեմաների շուրջ.

Թեմաներ

1. Գենդերային հավասարության կարևորությունը խաղաղության և անվտանգության օրակարգում

1 2 3 4 5

2. Կոնֆլիկտների վերլուծություն

1 2 3 4 5

3. «Կանայք, խաղաղություն, անվտանգություն» օրակարգ, ՄԱԿ ԱԽ 1325, 1820 և հարակից բանաձևեր

1 2 3 4 5

4. Կանանց իրավունքներին աջակցող ազգային օրենքներ և քաղաքականություններ

1 2 3 4 5

5. ՄԱԿ ԱԽ 1325, 1820 և հարակից բանաձևերի տեղայնացումը որպես «Կանայք, խաղաղություն, անվտանգություն» օրակարգի բանաձևերի իրականացման ռազմավարություն

1 2 3 4 5

6. Խաղաղության և անվտանգության, զարգացման և լավ կառավարման միջև կապը

1 2 3 4 5

7. Տեղական ինքնակառավարման մարմինների կառուցվածքը, մանդատը և պարտավորությունները «Կանայք, խաղաղություն, անվտանգություն» օրակարգի բանաձևերի իրականացման տեղայնացման, տեղական գործողությունների պլանների նախագծման շրջանակում

1 2 3 4 5

Խնդրում ենք 1-ից 5 բալանոց սանդղակով (1 - շատ վատ, 5 - գերազանց) գնահատել, որքան տեղեկատվական էին դասընթացի ընթացքում մատուցված հետևյալ թեմաները:

«Գենդեր» եզրույթի սահմանում

1 2 3 4 5

Կոնֆլիկտի վերլուծություն

1 2 3 4 5

ՄԱԿ ԱԽ1325, 1820 և ԿԽԱ հարակից բանաձևերի ներկայացում

1 2 3 4 5

Կանանց իրավունքներին աջակցող ազգային օրենքների և քաղաքականության շրջանակը

1 2 3 4 5

«Կանայք, խաղաղություն, անվտանգություն» օրակարգի շրջանակներում իրականացված խաղաղաշինական ծրագրերի ներկայացում. ձեռքբերումներն ու մարտահրավերները

1

2

3

4

5

Խնդրում ենք 1-ից 5 բալանոց սանդղակով (1 - շատ վատ, 5 - գերազանց) գնահատել, որքան տեղեկատվական էին դասընթացի ընթացքում մատուցված հետևյալ թեմաները:

Տեղայնացումը որպես «Կանայք, խաղաղություն, անվտանգություն» օրակարգի բանաձևերի իրականացման ռազմավարություն

1

2

3

4

5

Խաղաղությանը, ինչպես նաև կանանց և աղջիկների անվտանգությանը սպառնացող հիմնական խնդիրների վերհանում

1

2

3

4

5

Խաղաղության և անվտանգության, զարգացման և լավ կառավարման միջև կապի վերլուծություն

1

2

3

4

5

Տեղական ինքնակառավարման մարմինների կառուցվածքը, մանդատը և պարտավորությունները «Կանայք, խաղաղություն, անվտանգություն» օրակարգի բանաձևերի իրականացման տեղայնացման, տեղական գործողությունների պլանների նախագծման շրջանակում

1

2

3

4

5

Որքանով էր այս երկու օրերի քննարկումը օգտակար Ձեզ համար:

1. Ընդհանրապես օգտակար չէր
2. Շատ քիչ չափով էր օգտակար
3. Մասամբ էր օգտակար
4. Մեծամասամբ օգտակար էր
5. Շատ օգտակար էր

Արդյո՞ք այս դասընթացի ընթացքում ձեռք բերած փորձը կօգնի Ձեզ ձեր հետագա աշխատանքում: Եթե այո, ինչպե՞ս: Եթե ոչ, ինչու՞:

Ո՞ր թեման Ձեզ ամենաշատը հետաքրքրեց: Ինչու՞:

Ո՞ր թեման Ձեզ ամենաքիչը հետաքրքրեց: Ինչու՞:

Կազմակերպչական աշխատանքների գնահատում

Խնդրում ենք 1-5 բալանոց սանդղակով (1-շատ վատ, 5-գերազանց) գնահատել դասընթացի հետևյալ բաղադրիչները:

Դասընթացի անցկացման վայրը	1	2	3	4	5
Դասընթացի կազմակերպվածությունը	1	2	3	4	5
Թեմաների տրամաբանական հաջորդականությունը	1	2	3	4	5
Թեմաներին հատկացված ժամաքանակը	1	2	3	4	5
Մնունդը	1	2	3	4	5
Օգտագործված մեթոդները	1	2	3	4	5
Բանախոսների ընտրություն	1	2	3	4	5

Ինչը խորհուրդ կտաք բարելավել՝ դասընթացն ավելի արդյունավետ դարձնելու համար:

Այլ դիտողություններ և/կամ առաջարկություններ:

Որակաանուծյան ցանկ

1. «Արցախ. պատերազմը կանանց աչքերով», հղումը՝ <http://womennet.am/artsakh/>
2. «Կանայք, խաղաղություն և անվտանգություն. պատերազմի անտեսանելի կողմը», <http://bit.ly/2t4qYy7>
3. «Կանայք, խաղաղություն և անվտանգություն օրակարգի շրջանակներում խաղաղաշինական ծրագրերի քարտեզագրում» հետազոտություն, էջ. 6 – 9, «Հասարակություն առանց բռնության» ՀԿ, հղումը՝ <http://www.swv.am/index.php/hy/what-we-do-am/publications-am>
4. Կին և տղամարդ՝ տարբեր, բայց հավասար, հղումը՝ <http://bit.ly/2GZrTIL>
5. Կոնվենցիա պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին, 1949, Հոդված 1 և Հոդված 2, հղումը՝ <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=20872>
6. ՀՀ օրենքը Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մասին, 2013, հղումը՝ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=83841>
7. Հայաստանի գենդերային իրավիճակի գնահատում, հղումը՝ <https://www.adb.org/sites/default/files/institutional-document/178897/arm-country-gender-assessment-hy.pdf>
8. ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն - <http://mtad.am/hy/> «ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի 1325 բանաձև. Քաղաքացիական հասարակության 2014 թ. մշտադիտարկման զեկույց», հղումը՝ <http://bit.ly/2oDIT9J>
9. Colleen Burke, "Women and Militarism", Women's International League for Peace and Freedom (WILPF) file:///C:/Users/Lida/Desktop/Current/1325%20module/women_and_militarism_1998_043.pdf
10. Decision of the Secretary-General's Policy Committee, May 2007
11. «The Effects of Armed Conflict on Girls and Women», https://www.tandfonline.com/doi/pdf/10.1207/s15327949pac0404_6
12. European Commission, Justice Glossary, 2013, հղումը՝ https://definedterm.com/gender_sensitivity
13. Focus. Women, Gender and Armed Conflict, October 2009, հղումը՝ <https://www.oecd.org/dac/gender-development/44896284.pdf>
14. GNWP's localization of UNSCR 1325, <https://www.slideshare.net/ddcentr/gnwps-localization-of-unscr-1325-amp-1820-program-sept-22-2015>
15. Good Governance. An Overview, IFAD, September 1999, http://www.ipa.government.bg/sites/default/files/pregled-dobro_upravljenje.pdf
16. Impact of Armed Conflict on Women and Girls, <http://www.securitycouncilreport.org/atf/cf/%7B65B-FCF9B-6D27-4E9C-8CD3-CF6E4FF96FF9%7D/WPS%202010%20Sidebar2.pdf>
17. Inspiring Locally, Implementing Globally: Localization of UNSCR 1325 and 1820, <http://gnwp.org/program/inspiring-locally-implementing-globally-localization-of-unscr-1325-and-1820/>
18. Localizing UNSCR 1325 in Colombia, Nepal, the Philippines, Sierra Leone, and Uganda, http://bit.ly/1_4VPzF

ԷԼԵԿՏՐՈՆԱԿԻՆ ԻՎԱՍԳԵՆՆԵՐ

1. https://www.usip.org/gender_peacebuilding/about_UNSCR_1325, բացվել է 05.04.2018
2. <https://www.unicef.org/sowc96pk/sexviol.htm>, բացվել է 05.04.2018
3. <http://www.ohchr.org/en/newsevents/pages/rapeweaponwar.aspx>, բացվել է 05.04.2018
4. <https://www.un.org/ruleoflaw/files/womenpeaceandsecurity.pdf>, բացվել է 05.04.2018
5. <https://www.unescap.org/sites/default/files/good-governance.pdf>, բացվել է 05.04.2018
6. <http://www.peacewomen.org/member-states>, բացվել է 05.04.2018
7. <http://www.securitycouncilreport.org/atf/cf/%7B65BFCF9B-6D27-4E9C-8CD3-CF6E4FF96FF9%7D/CAC%20S%20RES%201820.pdf>, բացվել է 05.04.2018
8. http://www.scielo.br/scielo.php?pid=S1806-64452009000100003&script=sci_arttext&tlng=en, բացվել է 05.04.2018
9. <https://en.oxforddictionaries.com/definition/peace>, բացվել է 05.04.2018
10. <https://www.merriam-webster.com/dictionary/peace>, բացվել է 05.04.2018
11. <http://www.international-alert.org/what-is-peace>, բացվել է 05.04.2018
12. <https://lop.parl.ca/Content/LOP/ResearchPublicationsArchive/inbrief1000/prb0406-e.asp>, բացվել է 05.04.2018
13. http://www.swv.am/attachments/article/1223/%D5%84%D4%B1%D4%BF_%D4%B1%D4%BD_1325_%D4%B2%D5%A1%D5%B6%D5%A1%D5%B1%D6%87_%D4%B6%D5%A5%D5%AF%D5%B8%D6%82%D5%B5%D6%81.pdf, բացվել է 05.04.2018
14. <http://www.irtek.am/views/act.aspx?aid=78088>, բացվել է 05.04.2018



WITH FUNDING FROM
AUSTRIAN
DEVELOPMENT
COOPERATION



GNWP
The Global Network of Women Peacebuilders